Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 373 — ԵՐԵՔՇԱԲԹԻ 2 ԱՊՐԻԼ 1885 — (Ն. Տ.) 14 ԱՊՐԻԼ 1885 — 29 ՃԷՄԱԶԻ ԻՒԼ ԱԽԸՐ 1302

40 ՓԱՐԱ.

ՊԱՅՄԱՆՔ

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ · երկու անգամի համար 2 ղուրուշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։

Օրագրիս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրուածքներ պէտք է ուղղել

Առ խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի,
ԹՄԲԱԳՐԱՏՈՒՆ. Ղալաթիա, Նորատունկեան խան,
իսկ գաւառներէն հետեւեալ հասցէիւ՝

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده { ارەوولك }
غزته‌سى اداره‌سنه

Les annonces sont reçues
à l'EASTERN AGENCY,
Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար	Տարեկան	դահեկան	առձեռն	200
» »	Վեցամսեայ	»	»	100
» »	Եռամսեայ	»	»	50
Գաւառաց համար և տեղական թղթատարով տարեկան		»	»	240
Գաւառաց համար և տեղական թղթատարով վեցամսեայ		»	»	120
Օտար երկիրներ	Տարեկան	Ֆրանք		56
» »	Վեցամսեայ	»		28

Դուրս ղրկուած յօդուածոց համար ծախքը Տնօրէնութեան վրայ է։
Խմբագրութեան ղրկուած և ենթամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

Ծանուցմունք կ'ընդունուին
ԻՍՏԸՐՆ ԷՃԷՆՍԻ
գործակալութեան ձեռամբ, Քարաքէօյ, Տէյիրմէն խան

Կ. ՊՈԼԻՍ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 1 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵԿԻ ԹՈՒՐՔԱՁԱՅՆԵՐԷՆ ՔԱՂՈՒԱԾ

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Լոնտոն, 7 ապրիլ. Քաղաքական կացութիւնը շաբաթ օրէն ի վեր բաւական ծանրացաւ։ Բեդըրսպուրկի անգլ. դեսպանին հեռագիրք՝ անցեալ շաբթուն սկիզբն՝ յոյս կուտային յարաբերութեանց բարւոքման ի մէջ Անգլիոյ և Ռուսիոյ, բայց Պ. Կիրսի պատասխանագրոյն բնագիրն, երբ հասաւ Լորտ Կրանվիլլի ձեռք, փոփոխեց այս առաջին նպաստաւոր տպաւորութիւններ։ Ռուսական պատասխանագիրն, որ ձեւապէս հաշտարար է, իրօք չի պարունակեր ո՛և է զիջում Ռուսիոյ կողմէ։ Անգլիական կառավարութիւնն ալ կը պնդէ իւր պահանջմանց վրայ, առանց բնաւ զիջման։

Այն յաճախակի տեսակցութիւններ զոր Լորտ Կրանվիլլ ռուսական դեսպան Պ. Ստալի հետ ունեցաւ անցեալ շաբաթ օր, Նախարարաց Խորհրդէն առաջ, Խորհրդոյ միջոցին և անկէ ետքն ալ՝ ցարդ բնաւ փոփոխում յառաջ չեն բերած երկուց կողմանց տրամադրութեանց մէջ։ Բանակցութեանց այս ժխտական արդիւնք հեռագրեցաւ անմիջապէս առ Լորտ Տըֆըրին, որ ինչպէս յայտնի է, լիակատար արտօնութիւն խնդրած է անգլօ-ռուս խնդրոյն տնօրինման համար։ Նախարարք այս լիակատար ազատութիւնը տուին Հնդկաստանի Փոխարքային, ծանուցանելով թէ՝ վերջնական որոշում չտուած՝ պիտի ստանան Փոխարքային կարծիքներն ու տպաւորութիւնները խնդրոյն վրայ, և անոնց համեմատ պիտի գործեն։ Արդ, անգլիական գաղթականութեանց Մայր-հայրենեաց օգնելու համար ցոյց տուած փափաքն և ըստ ամենայնի Անգլիոյ հետ հաշտ և համաձայն ընթանալու մասին Աֆղանստանայ Էմիրին ի Ռավըլ Բինտի առ Լորտ Տըֆըրին յայտնած բաղձանքն անգլիական կառավարութիւնն ամուր կը բռնեն Ռուսիոյ դէմ իւր ընթացքին մէջ։

Կ'երեւի թէ, խնդրոյն ելից նկատմամբ վերջին բառը պիտի արտասանէ Հնդկաստանի կառավարութիւնն, որոշելով թէ հա՞րկ է պատերազմիլ, թէ ոչ՝ գոհանալ Ռուսիոյ յանձնառութեամբք։

Առ այժմ, բանակցութիւնք կը շարունակին և գաղտնի կը պահուին. բայց և այնպէս, զինուորական պատրաստութիւններն ալ մեծագոյն արագութեամբ յառաջ կը տարուին։

⁂

Հավասի Գործակալութեան այս հեռագրական տեղեկագրութենէն յետոյ, առնուած է ռուսոյ-աֆղանեան ճակատամարտին լուրն, որ, ինչպէս յայտնի է, աստիճան մ'եւս ծանրացուցած է իրաց վիճակը։ Ռուս կառավարութիւնը ցարդ տրամադիր չերեւցաւ պարսաւելու Քոմարոֆ զօրավարին ընթացքն, և այս ալ նոր խառնաշփոթութիւն մը յառաջ կը բերէ անգլօ-ռուս բանակցութեանց մէջ, որք արդէն նպաստաւոր երեւոյթ մը չունէին։

⁂

Բայց չյուսահատինք խաղաղութեան պահպանումէն։ Անգլիոյ Խաղաղասիրաց Ընկերութեան քարտուղար և երեսփոխան Պ. Հէնրի Ռիչարտ անցեալ շաբթու մէջ Պ. Կլատստոնի մատոյց հետեւեալ ուղերձն, որ ազատական 80 երեսփոխաններու ստորագրութիւնը կը կրէր.

«Կը համարձակինք յարգանօք հարցունել Ձեզ թէ, եթէ դիւանագիտական սովորական բանակցութեամբք գոհացուցիչ ելք մը չգտնուի մեր երկրի և Ռուսիոյ միջեւ առկախ մնացած խնդրոյն, պատշաճ չլինի՞ր արդեօք ի գործ դնել մեծ տէրութեանց 1856ին Բարիզի վեհաժողովոյն մէջ ըրած յանձնարարութիւնն, որուն համեմատ՝ այն տէրութիւնք որոց միջեւ ծանր թիւրիմացութիւն մը ծագի՝ պարտին՝ զինուց դիմելէ առաջ՝ կոչում ընել բարեկամ տէրութեան մը միջնորդութեան։»

Պ. Կլատստոն, իւր քարտուղարի միջոցաւ, հետեւեալ պատասխանը ղրկեց.

«Պ. Կլատստոն ստացաւ ձեր Ուղերձ, որով խորհրդարանի անդամք ոմանք կը խնդրեն գիտնալ չէ՞ որ և բարեկամ տէրութեան մը միջնորդութեան ի պարագային որ Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ վէճը չկարենայ կարգադրուիլ ուրիշ եղանակաւ։ Պ. Կլատստոն յանձնեց ինձ ըսել ձեզ թէ՝ չպիտի թերանայ իւր պաշտօնակցաց ծանուցանելու ձեր այս յանձնարարութիւն. բայց մինչեւ ցարդ ինք պատճառ չի տեսներ յուսահատելու դիւանագիտական բանակցութեանց գոհացուցիչ ելք մ'ունենալէն։»

⁂

Շատ դառնացած պիտի լինի Աֆղանստանայ Էմիրին սիրտն՝ իմանալով իւր քաջ զօրաց ջախջախումը, մինչ ինք, ի Ռավըլ Բինտի, անգլիական հողին վրայ, հաճոյական ժամեր կ'անցունէր Լորտ Տըֆըրինի հետ։ Էմիր Ապտ-իւր-Րահման փորձ զինուորական մ'է, և եթէ անգլօ-ռուս պատերազմը ծագի, անշուշտ երեւելի դեր մը պիտի կատարէ Աֆղանստանայ սահմանաց վրայ։

Թայմզի թղթակիցն ի Ռավըլ Բինտի կը հեռագրէ ապրիլ 7 թուով.

«Փոխարքային մեծ հացկերոյթ մը տուաւ Էմիրին։ Թագուհի-Կայսրուհւոյն կենաց բաժակ առաջարկելէ յետոյ, Լորտ Տըֆըրին բաժակ առաջարկեց Էմիրին կենաց։ Էմիրն այսպիսի պատիւ մը չէր սպասեր, և խօսելու պատրաստութիւն չունէր. բայց անմիջապէս պատասխանելով առ Լորտ Տըֆըրին, ըսաւ թէ կը յուսայ որ անգլիական կառավարութիւնը միշտ զօրաւոր և հաստատ պիտի լինի, և ամբողջ ամէն նոր բարգաւաճում պիտի ստանայ։ «Եւ ցորչափ անգլիական կառավարութիւնը զօրանայ և բարգաւաճի, կը յուսամ թէ պիտի զօրանայ և բարգաւաճի Աֆղանիստան, և իմ անձնական մեծութիւնս ալ պիտի աւելնայ երկրիս մեծութեան հետ»։ Էմիրը վերջացուց իւր պարսկերէն ճառ, ըսելով. «Աստուած զօրութիւն, պատիւ և կորով տայ Թագուհւոյն Էմիրներուն»։ Լորտ Տըֆըրինի հրաւիրմամբ, ներկայք երիցս ծափահարեցին Էմին խօսքերը։

«Էմիրին Ռավըլ Բինտի գալէն ի վեր անձրեւներ տեղացին յորդառատ, և արտաքին ցոյցեր շատ փայլուն չեղան։ Բայց այսօր օդը նպաստաւոր լինելով, Էմիրին փափաքանաց համեմատ զօրահանդէս մը կատարեցաւ Խաննայի դաշտին վրայ։ Փոխարքայն և Էմիրը թնդանօթներու արձակմամբ ընդունուեցան։ Հետեւակազօրաց, հեծելազօրաց և թնդանօթաձիգ զօրաց հանդէսներ կատարեցան։ Ապա, զօրավարաց դառնալով, Էմիրն ըսաւ թէ, մինչ 12 տարեկան էր միայն, իւր հայր դրած էր զինք ի գլուխ 22.000 զօրաց։ Ուստի, շատ բաներ գիտէր զօրաց վըրայօք, և շատ կը հետաքրքրուէր զինուորական գործերու։ Շատ ճամբորդած էր, շատ բաներ տեսած էր, բայց այս օրուան զօրահանդէսին չափ շքեղ բան չէր տեսած։ Զօրահանդէսի միջոցին, Էմիրն, արձանագրելով թնդանօթաձգութիւն և այլ զինուորական պարագայներ, գործնականապէս կը ցուցնէր թէ ո՛ր չափ կը հետաքրքրուէր այսպիսի գործերու։»

⁂

Ռավըլ Բինտի, 8 ապրիլ. Ի պատիւ Ապտ-իւր-Րահման Խանի Տէրպար (հանդիսաւոր ժողով) այս առաւօտ տեղի ունեցաւ, և շատ փայլուն եղաւ։

Էմիրը բազմած էր Փոխարքային աջ կողմն, որոյ ձախ կողմն էր Քոնօդի դուքսն, երրորդ որդի Թագուհւոյն։ Նուէրներու մատուցումէն յետոյ, Աֆղանից Էմիրն «էւէլ մ'ընելով», յայտարարեց թէ երախտապարտ կը զգայ ինքզինք վասն այն շնորհաց զորս Թագուհին և Փոխարքայն ըրին իրեն, և թէ, փոխադարձաբար, ինք պատրաստ է իւր բանակաւ և իւր ժողովրդով մատուցանել ամեն կարելի ծառայութիւն։ «Որովհետեւ Անգլիացիք յայտարարած են թէ պիտի օժանդակեն Աֆղանստանայ՝ վանելու օտար յարձակումներն, աֆղան ազգը զօրեղապէս պիտի յառի Անգլիացւոց, և անոնց կողմը պիտի բռնէ ամեն կռուոյ մէջ։»

Ցաւարտ սոյն բանախօսութեան, Փոխարքայն պատուոյ գեղեցիկ սուր մը նուիրեց Էմիրին։ Սա, շնորհակալիք յայտնելով, ըսաւ թէ կը յուսայ զարնել ադով Անգլիացւոց թշնամիները։

Ն. Բարձրութիւն Ապտ-իւր-Րահման Խան շատ գոհ կ'երեւէր այս հանդիսաւոր գործողութիւններէ։

(Ն. Բարձրութեան տրուած ընծաներուն մէջ են՝ ըստ նորագոյն լրոց՝ քանի մը հազար անգլիական ոսկւոյ կլորիկ գումար մը, թէեւ Էմիրն արդէն ամեն տարի կարեւոր գումար մը իբրև նպաստ կ'ընդունի Հնդկաստանի Գանձէն։)

ՌՈՒՍ ՏԷՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԻՒՐ ՀՊԱՏԱԿ ԺՈՂՈՎՈՒՐԴՔ

Երեկի թղթաբերով առնուած թերթերու մէջ արձագանգ գտած է Կովկասի Հայոց վարժարանաց փակման խնդիրը։

Պ. Կ. Ցակորեան «Հայկական գործեր» վերնագրով ընդարձակ նամակ մը կը հրատարակէ Թայմզի ապրիլ 9 թըւով, յորում կը խօսի Կովկասի Հայոց դպրոցներուն փակման վրայ, նոյն իմաստով որով այս խնդիր քննուած և պաշտպանուած է Արեւելքի մէջ։ Պ. Ցակորեան կաթողիկոսական և Պատրիարքական ընտրութեանց վրայ ևս կը խօսի։

Թայմզի աշխարհահամբաւ թղթակիցը, «Թղթակիցներու Թագաւորը», Պ. տը Պլովիձ իւր ապրիլ 6 թուով հեռագրական նամակին մէջ կը յիշատակէ զայս խնդիր, խօսելով Ռուսիոյ մէջ հարստահարեալ ազգութեանց և անոնց բաղձանքներուն և յոյսերուն վրայ, վերաբերմամբ անգլօ-ռուս պատերազմին։ Պ. տը Պլովիձ «Կովկասոյ ինքնօրինութեան» դատին համակիր կը թուի։ Իւր նամակ ամբողջովին կը թարգմանենք ստորեւ։

⁂

«ԴԺԳՈՀՈՒԹԻՒՆ Ի ՌՈՒՍԻԱ»

ԲԱՐԻԶ, 6 ապրիլ։ Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ պատերազմի հաւանականութիւնը շատ մը թմրած յոյսեր զարթուց Հիւսիսային մեծ կայսրութեան հարստահարեալ ալյազգի ժողովրդոց մէջ։ Դժգոհութեան արձագանգն հասաւ մինչեւ Բարիզ, և կ'երեւի թէ ռուս կառավարութիւնը, [illegible], կը հրահրէ դժգոհութեան բոցը։ Մի կողմէ, կրօնային հալածմունք, Ռուսիոյ Ս. Սինոդի Պրոկուրօրին՝ Պ. Բոպէտոնոսձեւի դրդմամբ՝ աւելցած են երկրին մէջ, այնպէս որ կաթոլիկութեան յարող Օրթոտոքսներ, Սթունտիստներն՝ որք միայն Աստուածաշունչ կը կարդան, Բողոքականներն և Հրեաներն ամենքն ալ հարստահարեալ և դժգոհ են։

«Լեհերու մէջ (արեւմտեան Ռուսիա, Բոլոնիա) սաստիկ կռիւ ծագած է, բողոքական գերմանացի հողատէրաց և օրթոտոքս բնիկներու միջեւ։ Հռենոս գետը ներկայացնող արձանին անհետացումն, որ գաղտնիք մը մնացած է ցարդ, և կը վերագրուի Տորպատի ռուս ուսանողաց, և ի Քուրլանտ, Եստոնիոյ օրթոտոքս եկեղեցւոյն հրկիզումը կրնան նկատուիլ իբրեւ արտաքին տեսանելի նշաններ Բոլոնիոյ մէջ ծագած գժտութեան։ Եթէ կաթոլիկ և օրթոտոքս եկեղեցիք առ ժամանակ մի դաշնակցած էին իրենց հասարակաց թշնամւոյն՝ յեղափոխական կուսակցութեան դէմ, այս վայրկենական զինադուլ դադրած է արդ, հալածմունք վերսկսած են, ա՛յն աստիճան անգթութեամբ որ Բոլոնացիք քաջութիւն ունեցան 1,000է աւելի ստորագրութեամբ աղերսագիր մը մատուցանել Զարին, և սա խօսքերով եզրակացնել զայն.

«Յօժարակամ պիտի հնազանդինք Ձեր Վեհափառութեան, բայց այն պայմանաւ որ Հռոմայ Եկեղեցւոյն հետ մեր միութիւն անվթար մնայ։ Եթէ երբեք բռնութեամբ պարտաւորուինք ընդունիլ օրթոտոքս կրօնը, մեր սիրտերէ պիտի անհետին ամեն կրօնային զգացում, ամեն հաւատք, և հետեւապէս ո՛չ ևս պիտի կրնանք բարի կամ հաւատարիմ հպատակներ լինել։»

«Հայաստանէն (կը յարէ Պ. Պլովիձ) նամակ մը հասաւ ինձ, որ կը պատմէ թէ ո՛ր աստիճան դայրոյթ պատճառած է ռուս իշխանութեանց ընթացքն, որք այս միջոցիս փակելու վրայ են անհամար հայկական, մահմէտական և վրացական դպրոցներ, այն պատրուակաւ թէ դաստիարակութիւնը ռուս լեզուաւ չաւանդուիր։ Իբրեւ վրէժխնդրական միջոց, Տփղիսի վաճառականք չեն ուզեր գործ ընել Ռուսաց հետ մինչեւ որ Ռուսք բնիկ բարբառներով չխօսին իրենց հետ, կամ թարգմաններ չբերեն։

«Վրաստանի գալով, Վրացի մը, որ առիթ ունեցած է իմանալու իւր հայրենակցաց զգացումը, Տփղիսէ կը գրէ ինձ ուրիշ նամակ մը, աղաչելով որ անգլիական հասարակութեան ներկայացնեմ արտայայտութիւն մը այն համակրանաց զոր Վրացիք կը զգան Անգլիոյ նկատմամբ։ Որպէս զի լաւագոյն հասկցուի այս իրողութիւն, Նամակագիրը կը յիշատակէ իւր հայրենեաց անցեալ պատմութիւնը։ Կը ցուցնէ թէ ի՛նչպէս Վրացիք, փոխ առ փոխ Թրքաց և Պարսկաց կողմէ արշաւանք կրելով, ի վերջոյ ընդունեցին Ռուսիոյ պաշտպանութիւնը։ Բայց Ռուսիոյ պաշտպանեալները լինելէ անմիջապէս յետոյ Զարին զոհերն եղան։ Ոչ ինչ պաշտպանութիւն կը ստանային, և ընդհակառակն կը պարտաւորուէին կրել ամեն կերպ կեղեքում։ Յիշելով զանազան պատմական դէպքեր, Վրացի նամակագիրը կը ցուցնէ թէ ի՛նչպէս ռուս պաշտօնատարներ, ռուսական օրինօք զինեալ, կ'արշաւէին երկրին ամեն կողմերը, ջախջախելով ամեն ազգային բնազդում, և կ'եզրակացնէ պնդելով թէ [illegible]։ Նամակագիրը կը յարէ.

«Ռուս կառավարութիւնն իսկ իւր ընթացքով արծարծեց այս անկախութեան բաղձանքը Վրացւոց մէջ։ Ազգին ամենէն նուիրական զգացումները կ'անարգէ՝ ջնջելով վրացական լեզուին գործածումը վարչութեան, դատարանաց, վարժարանաց, կրօնային պաշտամանց և հանրային հաստատութեանց մէջ։ Լրագրութեան ազատութիւնը ջնջուած է, և ազգային զգեստ կրողներն իսկ կասկածելի են յաչս Ռուսաց։ Վրացիք չեն կրնար Կայսրութեան մէջ ո՛և է կարեւոր դիրքի կոչուելու յոյս ունենալ. և Վրացւոց Եկեղեցին այժմ կը կառավարուի ձեռամբ ռուս Եպիսկոպոսի մը, որ անտեղեակ է մեր լեզուին և մեր Եկեղեցւոյ պատմութեան։

«Մինչեւ անցեալ տարի Վրացիք զերծ էին զինուորական պարտաւորիչ ծառայութենէն. բայց այս տարի այդ վերջին առանձնաշնորհումն ևս ջնջուեցաւ։ Մեր որդեակք կը խլուին մեր տուներէ, և կը պարտաւորուին ծառայել մեր հարստահարչաց կանոնաւոր բանակին մէջ։ Ուստի, այսօր, երբ մեր վիշտեր վրէժխնդրութեան մտածումներ կը ծնին և երբ ազատութեան սէրը կը մղէ մեզ աղաղակ բառնալ արդարութեան համար, Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ մօտալուտ պատերազմին լուրն ուրախութեամբ կը լնու զմեզ։ Հրճուանօք կ'ակնկալենք բրիտանական յաղթանակներ, իբրեւ նախաշաւիղ նշան մեր փրկութեան և մեր ազատութեան, և մեր բոլոր համակրանք Անգլիոյ կողմն են։ Նոքա որք Ռուս չեն՝ յետ այսօրիկ մեր դաշնակիցներ են։

«Եթէ անգլիական զօրքերը կարենային միայն ելնել ի Վրաստան, բոլոր Կովկասիա կ'ապստամբէր ընդդէմ Ռուսաց։ Ցաւալի ոչ քաղաքական մեծ բաղձանքներ ունէինք. բայց դառն փորձառութիւն մը նուաղագոյն աստիճանի մը վերածեց մեր փառասիրութիւն։ Շատ բան չենք պահանջեր. կը խնդրենք միայն հանդուրժելի կացութիւն մը. բայց որովհետեւ Ռուսիա չուզեր բնաւ զիջում ընել, պատրաստ ենք, եթէ քաջալեր գտնենք, զէնք առնուլ ի նպաստ Անգլիոյ։ Կը փափաքինք միայն վայելել նո՛յն ինքնօրինութիւն որ կայ Ֆինլանտիոյ Մեծ-Դքսութեան մէջ, և արտօնութիւն ունենալ գործածելու մեր լեզու։ Դժուար է հասկնալ թէ ինչո՞ւ համար Ռուսիա միշտ կը հարստահարէ զմեզ, և այսպէս իւր սահմանաց վրայ թշնամի տարր մը կը պահէ, ամեն վայրկեան իրեն դէմ զէնք առնլու պատրաստ։

«Անկախ Կովկասիա մը մեծապէս կրնայ նպաստել լուծման արեւելեան խնդրոյն։ Ազդու պատուար մը կը քաշուի Ռուսիոյ և Կեդրոնական Ասիոյ միջեւ։ Եթէ, Ասիա կամ Թուրքիա արշաւելու համար, ռուս զօրքերը պարտաւորուէին նախ պատերազմելով ճամբայ մը բանալ ինքնօրէն Կովկասեան երկրի մը մէջէն, ռուսական այդպիսի յարձակման մը դժուարութիւնք ան-

⁂

— 44 —

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԷՐՆ

ԿՐԱՆԹ ՆԱՒԱՊԵՏԻՆ ՈՐԴԻՔՆ

ԳԼՈՒԽ Ի.

ԱՐԺԱՆԹԻՆԻ ԴԱՇՏԵՐԸ

Արհեստով խորագծիչ մը չէր կրնար աւելի լաւ նկարագրել Հնդիկ ցեղը։

Սակայն, Թալքավի հրամանին համեմատ, ուղեւորք կուռ ջոկ մը կազմած կ'երթային։ Որչափ եւ ամայի էր երկիրն, զգուշանալ պէտք էր յանկարծական յարձակումներէ։ Բայց այս նախազգուշութիւն անօգուտ եղաւ. իրիկուան իջեւանեցան ընդարձակ լքեալ ամրոցակի մը մէջ, ուր Քամթրիէլ կասիկն իւր հրոսախումբը կը գումարէր սովորաբար։ Թալքավ՝ զննելով՝ նոր հետք չգտաւ, և եզրակացուց թէ ամրոցակն երկար ժամանակէ ի վեր բնակիչ ունեցած չէր։

Հետեւեալ օրը, Կլէնարվան եւ ընկերք դաշտն ելան, ուստից կը տեսնուէին առաջին էսթանսիաները (*)։ բայց Թալքավ որոշեց չկենալ անդ, և ուղղակի Ինտէբանտանս ամրոցին երթալ, ուր տեղեկութիւն ստանալ կ'ուզէր, մասնաւորապէս այդ լքեալ երկրին զարմանալի վիճակին վրայ։

Ծառերն, որք Քորտիլէրէն ի վեր հազուագիւտ էին, երեւնալ սկսան։ Շատերն Եւրոպացւոց Ամերիկա գալէն յետոյ տնկըւած էին. պատղախտներ, դեղձիներ, կաղամախներ, ուռիներ, ակակիաներ, որք ինքնին կը բուսնէին և արագապէս կ'ուռճանային։ Ընդհանրապէս «քօրրալ»ները (դուարաց ցցապատ փարախներ) կը շրջապատէին։ Անդ կը ճարակէին եւ կը պարարէին հազարաւոր եզներ, ոչխարներ, կովեր ու ձիեր, որք իրենց տիրոջ խարանադրոշմ կնիքը կը կրէին, և որոց շուրջը բազմաթիւ գամփռեր կը հսկէին աչալուրջ։ Լերանց ստորոտը ծաւալեալ քիչ մ'աղային երկիրն սքանչելապէս կը յարմարի դուարաց, և առատ ու ընտիր խոտ կ'արտադրէ։ Ուստի դուարածական ագարակներու համար այդ երկիրը կ'ընտրեն, և այդ ագարակաց վարչութիւնը կը յանձնուի ագարակապետի մ'և գործավարի մը, որք մէն մի հազար կենդանեաց համար չորս հովիւ կամ անասնաբոյծ ունէին իրենց հրամանին տակ։

Այս մարդիկ Ս. Գրոց մեծ հովիւներուն կեանքը կը վարեն։ Բազմաթիւ հօտեր ունին, աւելի բազմաթիւ թերեւս քան զայն հօտեր, որք Միջագետաց դաշտերը կը ծածկէին։ Բայց սոտ հովիւն ընտանիք չունի, և Բամբայի մեծ ագարակատէրերն՝ եւ զանց կոչտ վաճառականներ են միայն, եւ բնաւ չեն նմանիր Ս. Գրոց ժամանակի նահապետներուն։

Զայս յոյժ լաւ հասկցուց Բականէլ իւր ընկերաց, և այս առթիւ մարդաբանական յոյժ ուշագրաւ վիճաբանութիւն մը բացաւ մարդկային ցեղոց բաղդատութեան վրայ։ Մինչեւ իսկ յաջողեցաւ հազարապետին ուշադրութիւնը գրաւել, զոր չծածկեց նա։

Բականէլ առիթ ունեցաւ նաեւ կրկնեբեւութի հետաքրքրաշարժ արդիւնք մը դիտել տալ, որ յոյժ սովորական է այս հարթածաւալ դաշտաց մէջ։ Էսթանսիաները (դուարածական ագարակները) կղզիներու կը նմանին ի հեռուստ. նոցա շուրջը պատող ուռիներն ու կաղամախները կարծես կը ցոլանային վճիտ ջրի մը մէջ, որ ետ կը փախչէր ուղեւորաց քայլափոխերուն առջեւէն։ Բայց պատրանքն ա՛յնչափ կատարեալ էր, որ տեսողին աչքը չէր կրնար վարժիլ։

Արդ՝ նոյեմբեր 6ին օրը բազմաթիւ էսթանսիաներու հանդիպեցան, ինչպէս նաեւ մէկ երկու «սալատէրոյ»ներու, ուր դուարըն՝ հիւթեղ արօտներու մէջ պարարուելէ յետոյ՝ կերթայ սպանդը կ'երկնցնէ սպանդարի դանակին։ Սալատէրոյ, ինչպէս որ անունէն կը հասկցուի, այն տեղն է, ուր միսերը կ'աղեն։ Գարնան վերջը կ'սկսին այս դժպհի աշխատութիւնք։ Սպանդարք կ'երթան այն ժամանակ ճօպանով կը բռնեն նշանակեալ կենդանիներն և սպանդարանը կը տանին։ Անդ՝ եզինք, ցուլք, կովք, ոչխարք, հարիւրներով կ'սպաննուին, մորթեղէն կը լինին եւ կը մաքրուին։ Բայց ցուլք շատ անգամ դիւրաւ անձնատուր չեն լինիր. յայնժամ սպանդարը ցլամարտիկ կը փոխուի, և մեծ ճարտարութեամբ, և՝ պէտք է ըսել՝ հազուագիւտ վայրագութեամբ կը կատարէ զայդ վտանգաւոր արհեստ։ Վերջապէս, սոսկալի տեսարան մը կ'ընծայէ այդ սպանդ. Սալատէրոյի մը շրջակայներն յոյժ ժանտատեսիլ երեւոյթ մ'ունին։ Այդ սոսկալի շրջավայրերէն, ժահաբոյր հօտերով լի մթնոլորտի մը հետ դուրս կը ժայթքին սպանդարաց անագորոյն աղաղակներ, շանց չարագոյժ հաչիւններ, մահամերձ կենդանեաց կաղկանձներ, մինչ իւրիւպիներն ու ուրուբաներն, Արժանթինի դաշտին մեծամեծ անգղները, քսան փարսախ շրջականերէն հազարներով հոն դիմած, զոհերուն դեռ բաբախուն մնացորդներն սպանդարաց ձեռքէն կը քաշեն։ Բայց այն օր սալատէրոյները մունջ, խաղաղ և ամայի էին։ Նախճիրներուն ժամը տակաւին չէր հնչած։

Թալքավ կը փութացնէր ձիոց ընթացքը. կ'ուզէր նոյն իրիկուն Ինտէբանտանս ամրոցը ժամանել։ Ձիերը գրգռուելով իրենց վարելակներէն, և Թաուքայի օրինակին հետեւելով կը սլանային բարձրացօղուն սիքարոյներուն մէջէն։ Քանի մը կալուածներու հանդիպեցան, որք ամուր պատերով և խոր խրամատներով պաշտպանեալ էին։ Գլխաւոր տունը դարատափ մ'ունէր, որոյ վրայէն բնակիչք, զինուորաբար կազմուորեալ, կրնային հրացանի հարուածներ փոխանակել դաշտին աւարառուներուն հետ։ Կլէնարվան կրնար թերեւս ստանալ անդ իւր փնտռած տեղեկութիւնները, բայց ապահովագոյն միջոցն էր Թանտիլի գիւղն հասնիլ։ Ուստի կանգ չառին։ Լոս Հուէսոս գետակէն, և քանի մը մղոն անդին ալ Շափալէուֆու գետակէն անցան քալելով։ Շատ չանցած, Թանտիլի լեռն իւր առաջին դալարազարդ զառիվերները ներկայեց երիվարաց ոտներուն, և մէկ ժամ յետոյ գիւղը տեսնուեցաւ նեղ կրճի մը խորը, Ինտէբանտանս ամրոցին ժանեւոր պարիսպներուն ստորոտը։

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԻՆՏԷԲԱՆՏԱՍ ԱՄՐՈՑԸ

Թանտիլ լեռը ծովուն մակերեւութէն հազար ոտք բարձր է։ Նախնական լեռ մ'է, այսինքն ամեն կազմական և կերպարանափոխական ստեղծագործութիւններէ հին է, այնպէս որ իւր հիւսքն ու բաղադրութիւնը քիչ քիչ փոխուած են ներքին ջերմութեան ազդեցութեամբ։ Դալարապատ ապառաժներէ կազմեալ կիսաբոլորակ բլրոց յաջորդութիւն մ'է։ Թանտիլի գաւառակն, որ այդ լեռնաշղթէն առած է գիւր անուն, Պուէնոս-Այրէս գաւառին բովանդակ հարաւակողմը կը պարունակէ, և սահման ունի լեռնաշերտ մը, որ իւր կողերէն ծնած վտակները դէպ ի հիւսիս կ'ուղարկէ։

Այս գաւառակ չորս հազարի չափ բնակիչ ունի և կեդրոնն է Թանտիլի գիւղն, որ լեռնաշղթային հիւսիսային գագաթանց ստորոտը կը գտնուի, ընդ պաշտպանութեամբ Ինտէբանտանս ամրոցին։ Գիւղը բաւական լաւ է Շափալէուֆու կարեւոր գետակին վրայ։ Զարմանալի մասնաւորութիւն մը, զոր չէր կրնար չգիտնալ Բականէլ, այս գիւղի բնակիչք Ֆրանսացի և Իտալացի գաղթականք են։ Արդարեւ Բլաթայի այս ստորին մասին մէջ Եւրոպական առաջին գաղթականութիւնները Ֆրանսացիք հիմնած են։ 1828ին, երկիրն Հնդկաց անդուլ ասպատակութիւններէն պահպանելու համար Ինտէբանտանս ամրոցը շինուեցաւ Բարշափ Ֆրանսացւոյն խնամօք։ Առաջին կարգի գիտուն մ'օգնեց անոր այս ձեռնարկին, Ալսիտ տ'Օրպինիի, որ ամենէն լաւ հետազօտած, ուսած և նկարագրած է Հարաւային Ամերիկայի բոլոր հարաւակողման երկիրները։

Բաւական կարեւոր կէտ մ'է այս Թանտիլի գիւղ։ Իւր «կալէրա»ներուն միջոցաւ, որք եզներէ քաշուած մեծ սայլեր են՝ յոյժ յարմար դաշտին ուղիներէն անցնելու, տասն երկու աւուր մէջ կը հաղորդակցի Պուէնոս-Այրէսի հետ, և այսպէս բաւական բանուկ առեւտուր մ'ունի։ Գիւղն քաղաքը կը ղրկէ իւր էսթանսիաներուն դուարներն, իր սալատէրոյներուն աղածոյներն, և հնդկական ճարտարութեան հետաքրքրաշարժ արտադրութիւններն, այն է բամբակեայ կերպասները, բրդէ կտաւները, հիւսուած կաշիէ գործերն, որ յոյժ յարգի են, և այլն։ Այս պատճառաւ Թանտիլ, բազմաթիւ դիւրակեաց տուներէ զատ, դպրոցներ և եկեղեցիներ ալ ունի, իւր զաւակները թէ՛ այս և թէ՛ միւս աշխարհի մէջ կրթելու համար։

(Շարունակելի)

(*) Դուար սնուցանելու համար ընդարձակ փարախ կամ ագարակ։

հունապէս կ'աւելնային ։ Վրացիք, վերտնդալից և դժնդակ կեանքի մը սովորած, պատերազմի վարժուած և նորագիւտ ազատութեան մը սիրոյն համար մեռնելու պատրաստ, կրնան դիմադրութեան զօրաւոր տարր մը լինել, զոր Եւրոպա լաւ կ'ընէ անտես չառնելով, երբ կ'աշխատի արգիլել Հիւսիսային Հսկային արշաւանքները ։»

«Ո՛չ միայն (կը յարէ Պ. տը Պլովից) Կովկասիոյ, Բոյնիոյ և Պալթիկեան գաւառաց մէջ Ռուսիայէն անջատման շարժում մը կ'երևի բացորոշապէս, այլ Խազախներն իսկ այս միջոցիս սաստիկ դժգոհութիւն կը ցուցնեն ռուս կառավարութեան դէմ, որ կը փորձէ կանոնաւոր բանակին մէջ մուծանել զիրենք ։»

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. Վիէննա, 11 ապրիլ առ Հավաս. Կ. Պոլսէ կը ծանուցուի թէ Վեհ. Սուլթանը Պարսկաստանի Շահին ջերմ փափաք յայտնած է որպէս զի Պարսկաստան և Թուրքիա համաձայնութեամբ ընթանան եթէ անգլօ–ռուս պատերազմը ծագի։

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՉԻՆ. Նորեկ թղթաբերով առնուած լրագիրք մեզ կը բերեն ամբողջ պատմութիւնն այն բանակցութեանց, որք առաջնորդած են ֆրանքօ–չինական հաշտութեան սկզբնական պայմանաց ստորագրման։ Այս իրողութիւն ստոյգ է. այսինքն՝ ֆրանքօ–չինական պատերազմը վերջ գտած է։ Չինացիք պիտի թողուն Թոնքինը, նաև այն դիրքեր զորս վերջերս խլեցին Ֆրանսացւոցմէ, բայց պատերազմական տուգանք չպիտի վճարեն։ Առևտրական դաշնագիր մը պիտի կնքուի երկու երկրաց միջև։ Հաշտութեան կնքումն արդէն հրատարակուած է Բեքինի պաշտօնական թերթին մէջ, և Թոնքինի չինական զօրաց հրաման ղրկուած է երկրէն դուրս ելնելու և չինական երկիրը վերադառնալու։ Պ. Պրիսոնի նախագահութեամբ կազմեալ Նոր Նախարարութիւնը մասն չէ ունեցած հաշտութեան կնքման մէջ, որ տեղի ունեցած է ճիշդ այն միջոցին երբ Պ. Ժիւլ Ֆէրրի ինկած էր, բայց Նոր Նախարարք բոլորովին իրենց ձեռքը չէին առած դեռ երկրին կառավարութեան ղեկը ։ Պ. Ֆէրրի կատարեալ գաղտնապահութեամբ գործած է, զարմանք պատճառելով ամենուն ալ. — Օրինաւոր Նախարարութիւն մը, թէև նոր իշխանութիւն անցած, տեղեկութիւն չունենայ խաղաղութեան մը կնքումէն, և Խորհրդարանի ներկայանալով 150 միլիոն ֆրանքի պատերազմական վարկ մը քուէարկել տայ, մինչ անդին անկեալ Նախարարապետ մը կը փութար վերջին ձեռակերպութիւններն ի գլուխ կը հանէր, պատուաւոր վախճան մը բերելով երկարատև և բազմածախ պատերազմ մը ։ Բայց Նոր Նախարարութիւնը չէ մերժած Պ. Ժ. Ֆէրրիի այս վերջին գործ, ընդհակառակն իւրացուցած է զայն ։ Ֆրանսա այսպէս կը հասնի իւր նպատակին, առանց նոր ճակատամարտներու, և Բեքինի կառավարութիւնն, իւր յաղթութիւններէ անմիջապէս յետոյ փութացնելով խաղաղութեան կնքումը, չափաւորութեան և քաղաքագիտութեան նշանաւոր փորձ մը կուտայ ։

ՅՈՅՆՔ ԵՒ ՊՈՒԼԿԱՐՔ. Թայմզի Կ. Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ ապրիլ 7 ին․ Օրթոտոքս յոյն հասարակութիւնն ամեն կողմէ բողոքալից աղերսներ ուղղեց կառավարութեան որպէս զի չտայ Մակեդոնիոյ թեմերուն համար պուլկար Առաջնորդներու Պէրաթները, մինչ սոյն թեմերու մէջ կան արդէն Առաջնորդներ օրինաւորապէս անուանեալ Օրթոտոքս Պատրիարքութենէն։ Ի նկատ առնլով այս աղերսներ, Բ. Դուռը չը տուաւ այդ Պէրաթներ, թէև ռուս դեսպանը կը գործէր ի նպաստ Պուլկարաց ։ Բայց խնդիրը վերջնապէս չէ լուծուած, և ուրիշ մի քանի նմանօրինակ խնդրոց պէս, յետաձգուած է առ ժամանակ մի։

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ. Բոլիթիքէ Քօռէսփօնտէնց կ'իմանայ Լոնտոնէ թէ Եգիպտական Պայմանագրոյ ստորագրման միջոցին գիտուած անգլօ-թուրք պաղութիւնն արդէն անհետ եղած է, և Հասան Ֆէհմի փաշա ժամանակ մի ևս պիտի մնայ Լոնտոն ։ Նոյն թերթ կ'իմանայ Կ. Պոլսէ թէ դաշնակցութեան մը համար ռուսօ-թուրք բանակցութեանց զրոյցք երբեք հիմնաւոր չէին, բայց [illegible] գիտնամբ կը տարածէին զանոնք՝ երկիւղ պատճառելու համար Անգլիացւոց այն մասին որ ամեն միջոց յանձն կ'առնու խաղաղութիւնն անվթար պահելու ։ Բոլիթիքէ Քօռէսփօնտէնց կը յարէ թէ Թուրքիոյ մէջ երկու փոքր կուսակցութիւններ միայն յարեալ էին այս գաղափարին.—Նոքա որք, ռուսական սպառնալեաց տեղի չթողլու համար, կը նախընտրեն Ռուսիոյ գիրկը նետուիլ, և նոքա որք կ'ուզեն վրէժ լուծել Անգլիայէն ։ Թուրքաց մեծամասնութիւնը, սակայն, համամիտ է Հասան Ֆէհմի փաշային, յարելով կը մնայ Անգլիոյ, հակառակ ամեն թիւրիմացութեան, և անհնարին և վնասաբեր կը նկատէ ռուսական դաշնակցութիւն մը ։ Բոլիթիքէ Քօռէսփօնտէնց չի տարակուսիր թէ ուշ կամ կանուխ Անգլիա և Թուրքիա պիտի դաշնակցին ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տիգրանակերտէն ի Պատրիարքարան հասած հեռագիր մը նկարագրելով տեղւոյն Ազգ. գործոց անխնամ վիճակը, կը խնդրէ որ Առաջն. Տեղապահ մը ղրկուի հոն և կամ առաջնորդական ընտրելեաց ցանկ մը ։

Պատր. Դիւ. Տեղապահ հայրը սոյն հեռագրին և ուրիշ այսպիսի հեռագրեր և պաշտօնագրեր վաղուան Գումարելի Կրօն. Ժողովոյ պիտի ներկայացընէ, որպէս զի նկատողութեան առնուելով՝ պատրաստուի առաջնորդական ընտրելեաց ցուցակն, որ քանի մը ամսէ ի վեր խնդրոյ նիւթ եղած է, բայց տակաւին չէ պատրաստուած ։

Անցեալներն, իմանալով թէ Վարչութիւնը մտադիր է Պալըքեսիրի Առաջնորդութեան կեդրոն ընել զՊանտրմա՝ առանց տեղական ժողովրդեան կամքն ու կարծիքն իմանալու, խոհեմութեան յորդոր կը կարդայինք, գուշակելով թէ դժուարութիւնք կրնային ծագիլ։ Անկէ ի վեր Վարչութիւնը Կէօմիւրճեան Մովսէս վարդապետը ղրկեց Պանտրմա՝ իբրև Պալըքեսիրի Առաջնորդական Տեղապահ։ Եւ ահա կը լսենք թէ դժուարութիւնք և դժտութիւնք արդէն սկսած են։ Ի Պալըքեսիր կայ Առաջնորդական Փոխանորդ մը, Տ. Մելքիսեդեկ քահանայ, որ, տեղական ժողովոց հետ համաձայնութեամբ, չի ճանչնար զՄովսէս վարդապետ, և ի գործ չդներ նորա հրամայած անօրինութիւններն։ Թէև Պատրիարքարանէն ծանուցուած է Պալըքեսիրի Առաջնորդական Տեղապահին թէ պարտի տեղի տալ Մովսէս վարդապետին, բայց Պալըքեսիրի ազգային ժողովներ պատասխանած են թէ, ըստ Սահմանադրութեան, իրենց իրաւունքն է ընտրել իրենց Առաջնորդական Տեղապահն։ Ըստ մեզ, խոհեմութիւն կը լինի Պատրիարքարանի կողմէ, Մովսէս վարդապետին տալ միայն քննիչի պաշտօն մը, ստուգելու համար թէ կարելի՞ է Պալըքեսիրի Առաջնորդութեան կեդրոնն ի Պանտրմա փոխադրել։ Այս առաջին խնդրոյ լուծումէն յետոյ, Տեղապահի ընտրութիւնն օրինական եղանակաւ կրնայ ի գործ դրուիլ։ Բայց Պալըքեսիրի ազգայինք ևս պարտին զգուշանալ ազգային օրինաւոր իշխանութեան դէմ ըմբոստ գտնուելու աններելի թերութենէն, և չափաւորութիւն ցոյց տալ իրենց իրաւանց պաշտպանութեան մէջ։

Սեբաստիոյ Կրօն. Ժողովն գիր մը գրելով ի Պատրիարքարան, կը գանգատի Շիշմանեան Տ. Ղևոնդ եպիսկոպոսի դէմ, թէ տիրացուներ սարկաւագ ձեռնադրելով լքեալ կը թողու զանոնք և թոյլ կուտայ որ նոքա թափառական շրջին Սեբաստիոյ գաւառին մէջ, ի գայթակղութիւն ժողովրդեան, առանց ի ձեռին վկայական ունենալու ։

Պատր. Տեղապահն որոշեց այս մասին բացատրութիւն պահանջող գիր մը գրել առ Ղևոնդ եպիսկոպոս ։

Եգիպտոսէն կը ծանուցանեն մեզ թէ Խտիվին Սէրմէտ պաշէ Մեծ. Տիգրան էֆէնտի Մկրտիչեան, որ վեց ամիս առաջ Հապէշստանի Յովհաննէս Թագաւորին համար ծանրագին և մարգարտազարդ վերարկու մը պատրաստելով, անձամբ տարած էր զայն Նորին վեհափառութեան մատուցանելու, այս օրերս Եթովպիայէն վերադարձեր է յԵգիպտոս ։ Նորին Վեհափառութիւնը խիստ գոհ եղեր է Հայազգի արուեստագիտին ձեռակերտէն, և մեծամեծ պատիւներով ցոյց տուեր է իւր գոհունակութիւնն, ինչպէս նաև Նորանոր յանձնարարութիւններ ալ ըրեր է, միանգամայն յայտնելով բաղձանս թէ այն ամեն Հայերն որք Եթովպիա գնացած են վաճառականութեամբ, յանչափս գոհ բրած են զինքը, և թէ ինք միշտ կը փափաքի Հայոց հետ գործ ընել և զանոնք քաջալերել իւր երկրին մէջ ։

Երէկ ծանուցած էինք թէ Պոյաճը գիւղի Թաղ. խորհուրդը Թաղին կիսաւարտ եկեղեցւոյ շինութիւնը շարունակելու ձեռնարկեր է ։

Պոյաճը գիւղէն արժանահաւատ ազգային մը կը յայտնէ մեզ թէ՝ այդ շինութեան գործն ոչ թէ Թաղ. խորհրդոց ձեռամբ, այլ Ազգ. Պատրիարքարանի կողմէ յառաջագոյն կարգեալ յատուկ յանձնաժողովոյ մը ձեռամբ կը կատարուի, ինչպէս որ քանիցս առիթ ալ ունեցած ենք յիշելու ։

Չէնկիլքէօյի Թաղ. Խորհուրդը կը ծանուցանէ ի Պատրիարքարան թէ տեղւոյն վեց քահանայք, թէև կ'ընդունին ծխական բաժանումն ըստ որոշման Կրօն. Ժողովոյ Կեդր. Վարչութեան, սակայն երկու հին քահանայք չեն ընդունիր զայն ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ոսկար Թագաւորն երէկ ժամը 4ին իւր որդւոյն՝ Լօժէն իշխանին հետ՝ Թիւնէլով Ղալաթիա իջաւ և անտի պալատական կառօք Պոլսոյ կողմն անցնելով շուկայն այցելեց և արևելեան տեսակ տեսակ ապրանքներ գնելէ յետոյ, վերադարձաւ ի դեսպանատուն ։

Ն. Վեհափառութիւնն երէկ ևս իւր արքայական այցետոմսը ղրկեց գերմանական, ռուսական, անգլիական, աւստրիական, հոլանտական, հելլենական, սերպիական և ռումանական դեսպանատանց, և ժամը 8ին միջոցները, Վեհ. Սուլթանի հրաւիրանօք, Եըլտըզի պալատը գնաց հանդիսաւորապէս, Թագուհւոյն և որդւոյն հետ, և գիշերայն Բերա վերադարձաւ ։

Շարլ իշխանն օր ըստ օրէ ապաքինելու վրայ է ։

Բժիշկները կիրակի օր հետևեալ տեղեկագիրը տուին ։

«Հիւանդ իշխանն այսօր ըստ բաւականին ապաքինութեան մէջ է, մարմնոյն ջերմութիւնն է 37 աստիճան, բազկերակը մէկ վայրկենի մէջ 76 կը զարնէ ։»

Երէկ ևս հետևեալ տեղեկագիրը տրուած է ։

«Հիւանդ իշխանն ապաքինելու վրայ է, մարմնոյն ջերմութիւնն է 37,5 աստիճան. բազկերակը վայրկենի մը մէջ 80 կը զարնէ »։

Շուէտի Թագաւորին հիւանդ թիկնապահ Պ. Րիպպինկի հայրն ու մայրն երէկ Վիեննայի ճանբով մայրաքաղաքս եկան և ուղղակի հիւանդանոց գնացին իրենց որդին տեսնելու համար ։

Շաբաթ իրիկուն Եըլտըզի պալատան մէջ ի պատիւ Ոսկար Թագաւորին տրուած սեղանին ներկայ էին նաև գերմանական դեսպանն ու դեսպանուհին, և այս՝ ի պատիւ Սոֆի Թագուհւոյն՝ որ Գերմանիոյ արքունական ընտանիքէն է։ Թագաւորին ու Թագուհւոյն մեկնելէն յետոյ, Վեհ. Սուլթան առանձնակի տեսակցեցաւ Պ. և Տիկին Րատովիցի հետ։

Նոյն օրը, Ն. Կ. Վեհափառութեան կողմէ նուիրեալ պատուանշանաց մէջ յիշատակութեան արժանի են նաև Օսմանեան առաջին կարգի պատուանշանն որ տրուեցաւ շուէտական դեսպան Պ. տ'Էհրէնոֆի, և Շեֆգաթի պատուանշանն՝ առ Տիկին Վայէնտէրկ և Օր. տ'Էհրէնոֆ։

Վեհ. Սուլթանն ադամանդազարդ ծանրագին [illegible] մը նուիրեց Սոֆի Թագուհւոյն։

Յունաց Ամեն. Պատրիարքը նախընթաց օրը Բերա երթալով, այցելութիւն տուաւ ռուսական, սերպիական, յունական և ռումանական դեսպանաց։

Նմանապէս Գերմանիոյ դեսպանատունն երթալով, փոխադարձ այցելութիւն տուաւ Պ. Րատովիցի որ անցեալ շաբթու Ֆէնէրի պատրիարքարանը գնացած էր։

Պիզմարք իշխանին ծննդեան 70 դ տարեդարձին առթիւ մայրաքաղաքիս գերմանական հպատակաց կողմէ ղրկուած ուղերձին ծանրագին նուէրն ապրիլ 2ին մատուցուեր են Ն. Բարձրութեան ։ Իշխանն այդ պահուն կը խօսակցէր ֆրանսական, իտալական, սպանիական դեսպանաց հետ ։ Բոլոր բարձրաստիճան անձինք ալ հաւաքուած էին հանդիսական մեծ դահլիճին մէջ, ուր տիկին Պիզմարք հիւրերը կ'ընդունէր ։

Իշխանը նախ և առաջ հիացմամբ դիտեր է Ուղերձին գեղանկար շրջանակն, և զայն կարդալէ յետոյ, թուրը քաշեր է պատեանէն և ներկայ դեսպանաց ցոյց տալով ըսեր է . «Ո՛չ միայն արհեստական տեսակէտով՝ պատուական զէնք մ'է այս, այլ և պատմական մեծ արժէք ունեցող նիւթ մը, քանզի ըստ որում հռչակաւոր Թէփէտէլէնլի Ալի փաշայի գործածածն է։» Ապա, նշմարելով որ թուրին բերանն արաբերէն արձանագրութիւն մը կայ, Պէրլինի Համալսարանի արևելեան լեզուի ուսուցիչներէն մէկէն՝ որ անդ կը գտնուէր՝ խնդրեր է որ թարգմանէ զայն, և ուսուցիչը բարձրաձայն կարդացեր է արձանագրութիւնը ։ «Ան որ այս զէնքով սպաննուի, տեսակ մը հաճոյք պիտի զգայ մահուան մէջ, մտածելով որ այս տեսակ պատուական սրէ մ'ընդունած է զայն։»

Պիզմարք իշխանն յոյժ գոհ մնացեր է Կ. Պոլսոյ Գերմանացւոց այս հոգածութենէն և մեծ բերկրութեամբ ու սքանչանօք ընդուներ է նուէրն ։

Կ. Պոլսոյ Ռումանական Նորընտիր դեսպան Պ. Կիքա որոյ երէկ մայրաքաղաքս գալը ծանուցինք, Ս. Փրկչի առաջին պատուանշանն ընդուներ է Յունաստանի Թագաւորէն ։

Սոֆիայէն առնուած լրոյ նայելով, մեծ տէրութեանց ներկայացուցիչք ծանուցագիր մ'ուղղելով պուլղար իշխանապետութեան, յայտներ են թէ պատասխանատու պիտի ճանչեն զինքն այն պարագային յորում Մակեդոնիոյ խռովութիւններն արծարծելու նպատակաւ եղած շարժումները քաջալերէ։

Ժէրոմ Պոնաբարթ իշխանին որդին Լօժէն Նաբոլէոն իշխանն այս առաւօտ մայրաքաղաքս հասաւ Աղեքսանդրիայէն եկող աւստրիական շոգենաւով և ֆրանսական դեսպանատունը գնաց ։

Ադրիանուպոլսոյ մէջ դրամատուն մը հաստատելու համար ասկէ չորս ամիս առաջ կայսերական հրովարտակ մը տրուած էր Պ. Հանսոնի ։

Այդ դրամատուն մինչև ցարդ բացուած չլինելով, պէտք եղած տեղէն դիմում եղած է առ բարձր Մեծ. Եպարքոսն, որպէս զի ըստ պայմանագրի ետ առնուի Պ. Հանսոնի տրուած հրովարտակն ։

Էքսբրէս կ'իմանայ թէ կայսերական կառավարութիւնն յանձնարարեր է Ղազի Մուխթար փաշային և զինուորական յանձնաժողովոյ նախկին նախագահ Ֆերիք Իսմայիլ Հագգը փաշային Կարին երթալ և քաղաքին ու շրջակայից ամրութիւններն աչքէ անցունել ։

Իտալական դեսպան Քորթի կոմսն իւր ուղևորութիւնն յառաջիկայ տարուան թողեր է ։

Վեհ. Սուլթանն իմանալով որ Նախկին Շէյխ իւլ Իսլամ Խայրուլլահ էֆէնտիին՝ որ Մէքքէ աքսորուած և անդ մեռած էր՝ ընտանիքը չքաւորութեան մէջ են, բարեհաճեցաւ 5000 ղրշ. ամսաթոշակ յատկացնել ։

Ելմտական նախարար Մինիր փաշա հիւանդ է չորաթէ մ'ի վեր և բժշկաց ձեռամբ կը դարմանուի. բարեբաղդաբար ծանր եղանակ մը չունի հիւանդութիւնն և բժշկուելու վրայ է։

Պուլղար Մետրապոլտաց Պէրաթի խնդրոյն վրայ հետևեալ տեղեկութիւնները կը քաղենք յունական Կոնստանդինուպոլիս լրագրէն ։

Դատական և կրօնական գործոց նախարարի տեղապահ Բեամիլ փաշա անցեալ շաբթու իւր քով կոչեց պուլղարաց Դեր. Էկզարքը, Պէրաթներու խնդրոյն վրայ բանակցելու համար ։ Բեամիլ փաշա հասկցուցեր է Էկզարքին թէ կայս. կառավարութիւնը տրամադիր է Պէրաթներն յանձնել, բայց թէ այս բանիս համար հարկ է որ Պուլղար քահանայք նախ իրենց հագուստը փոխեն ։ Պէտք է որ, յարեր է Նախարարն, Էկզարքարանն յունական եկեղեցիէն բոլորովին անջատեալ նկատուի ։ Այս դիտողութեան ի պատասխան, Էկզարքն յայտներ է թէ այս բան անկարելի է իրեն համար, քանզի ինք օրթոտոքս է և ո՛չ ոք կրնայ Պուլղարներն օրթոտոքս չը նկատել ։ Հագուստն օրթոտոքս կղերին որոշիչ նշանն է, յարեր է Էկզարքն, և պուլղար եկեղեցականք երբէք չպիտի փոխեն զայն ։ Յայնժամ նախարարը պատասխաներ է թէ քանի որ Էկզարքն ինքզինքն և իւր հօտն օրթոտոքս կը նկատէ, պէտք չունի ուղղակի աշխարհական իշխանութեան դիմելով Պէրաթ խնդրել, այլ ընդհակառակն դիմելու է կրօնական իշխանութեան, այն է Յունաց Պատրիարքարանին որ գլուխն է օրթոտոքսութեան ։ Օրթոտոքս եկեղեցականաց Պէրաթները Ֆէնէրի Պատրիարքարանի խնդրանօք կը յանձնուին. արդ, եթէ Պուլղարք ինքզինքնին օրթոտոքս կը նկատեն, ուրեմն պարտին Պատրիարքարանին դիմել ։

Էկզարքը պատասխաներ է այսմ, միշտ ըստ տեղեկութեանց Կոնստանդինուպոլսի, որ, եթէ կառավարութիւնն կ'ապահովէ զինքը թէ ըստ առաջնոյն պիտի շարունակէ Էկզարքն մնալ՝ Էկզարքարանի հաստատման հրովարտակին համաձայն, և այդ Ֆէրմանի բոլոր տրամադրութեանց գործադրութիւնը կ'ապահովէ, յայնժամ ինք (Էկզարքը) պիտի փութայ իւր բոլոր եկեղեցականաց հետ ճանչել Յունաց Պատրիարքարանի իրաւասութիւնն և այդ Ֆէրմանի մէջ դրուած պայմանք գործադրել ։

Այս խօսակցութենէն յետոյ, Բեամիլ փաշա տեսակցութիւն մ'ունենալով Յունաց Պատրիարքին հետ, յայտներ է Ն. Սրբազնութեան թէ կայս. կառավարութիւնը կը փափագի այս կնճռոտ խնդրոյն լուծման մէկ եղանակը գտնել ։ Պատրիարքն, ի պատասխանի, դաւ յայտներ է որ այս պարագային մէջ Եկեղեցին ոչինչ կրնայ ընել ։ Եկեղեցական կանոնաց հակառակ չէ ներելի ինչպէս իրեն նոյնպէս ալ ամենապարզ քահանայի մը ։ Ասիկա զուտ կրօնական և կանոնական խնդիր մը լինելով, կարելի չէ ո՛ր և է աշխարհական լուծում գտնել անոր ։

Յովակիմ Պատրիարքն ի վերջոյ առաջարկեր է զԲեամիլ փաշա թէ, ըստ իւր պարտականութեան, Պատրիարքարանի Սինոդին և Խառն Ժողովոյն պիտի հաղորդէ կայս. կառավարութեան սոյն փափաքը ։

Վեհ. Սուլթանի կողմէն Գերմանիոյ Կայսեր և Պիզմարք իշխանին տրուած պատուանշանները մատուցանելու պաշտօնով Պէրլին գտնուող Րիզա փաշայի ի պատիւ Գերմանիոյ արքունեաց մէջ կոչունք մը տրուած է, որուն ներկայ գտնուեր են Րիզա փաշա և իւր պարագայք, Պէրլինի Օսմ. դեսպան Սայիտ փաշա, խորհրդական Օհան էֆէնտի Պաղտատլեան, և այլ բարձրաստիճան պաշտօնատարք և ազնուականք, ընդամենն 30 հոգի ։

Վիէննայի ռումանական Նորընտիր դեսպան Պ. Մավրոյենին իւր տիկնոջ հետ այսօր կը մեկնի մայրաքաղաքէս Պուքրէշ երթալու համար, ուր ժամանակ մը մնալէ յետոյ, Վիեննա պիտի երթայ իւր Նոր պաշտօնի գլուխն անցնելու ։

Այս կիրակի օր ռուսական դեսպանատան մատրան մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ հանգուցեալ Օրլօֆ իշխանին։

Քանիցս յիշած ենք արդէն թէ Բ. Դուռն Արևելեան Ռումէլիի կուսակալէն բացատրութիւն խնդրած է այն օրինական ծրագրոյ վրայ որք վերջերս քուէարկեցան գաւառին Երեսփոխանական ժողովէն ։ Ասոնց մէջ կան գլխաւորաբար Պուրկազէն ի Ֆիլիպէ կառուցանելի երկաթուղւոյ մը ծրագիրն, և 1877–78ի պուլղարական ապստամբութեան մասնակցող կամաւորաց յատկացնելի հանգստեան թոշակի օրէնքն ։ Կայս. կառավարութիւնք չվաւերացուց այս երկու օրինական ծրագրերն՝ որք հետևաբար իբր չեղեալ պէտք է նկատուին ։

Արտաքին գործոց Նախարարութիւնը հրաւիրած է գաղթականաց յանձնաժողովը որպէս զի Սերպիայէն ի Թուրքիա գաղթող Իսլամաց ծանուցանէ թէ իրենց կրած վնասուց հատուցման խնդիրը կարգադրուելու վրայ է ։

Հետևաբար այն Իսլամք որոց կալուածք յառաջագոյն աւերուած կամ գրաւուած էին ի Սերպիա, կը հրաւիրուին իրենց պահանջքն հաստատել անձամբ կամ փոխանորդի մը միջոցաւ և իրենց վնասուց հատուցումն ստանալ, ապա թէ ոչ ապագային մէջ իրաւունք չպիտի ունենան բան մը պահանջելու։

Բ. Դրան և Արևելեան Ռումէլիի միջև առկախ մնացած խնդրոյն քննութեան համար կարգեալ յանձնաժողովն իւր նիստերը կը շարունակէ ընդ նախագահութեամբ Քարաթէօտորի Աղեքսանդր փաշայի, որ տասն տարի առաջ ևս նախագահած է երկու կողմանց միջև ծագած քանի մը խնդրոց քննութեան համար կարգեալ յանձնաժողովոյ մը ։

Պ. Լ. Բոթա և Պ. Ի. Քարո փաստաբանք կ'օգնեն յանձնաժողովոյ աշխատութեանց ։

Ուրֆայէն կը գրեն առ Լա Թիւրքի թէ նորընտիր կառավարիչ Զիա պէյ, անդ հասնելով, իւր պաշտօնի գլուխն անցեր է ։ Կայսերական հրովարտակի հանդիսաւոր ընթերցումէն յետոյ, Զիա պէյ բանախօսութիւն մ'ընելով, յայտներ է թէ իւր գլխաւոր ջանքերը պիտի նուիրէ հանրօգուտ շինութեանց ։

Մոնիթէօր Օրիանթալ կը ծանուցանէ թէ հեռագրոց տնօրէն Իզզէթ էֆէնտի, երկու տարուան փորձերէ և ջանքերէ յետոյ, յաջողեր է վերջապէս Թուրքերէն լեզուաւ հեռագրերն Հիւկ-ի գործիքով զարնելու եղանակը գտնել։ Յայտնի է թէ այս դրութեամբ մինչև ցարդ ֆրանսերէն հեռագիրք միայն կրնային տպուիլ, և Թուրքերէն հեռագիրք ձեռքով կը գրուէին ։

Փիլիպէէն կը գրեն թէ Արևելեան Ռումէլիի կուսակալ Կավրիէլ փաշա մարտ 28 թուականաւ տեղեկագիր մը ուղղելով Բ. Դրան, ծանուցած է որ անհիմն է այն լուրն թէ հանրօգուտ շինութեանց տնօրէն Պ. Մոքրաքալթոֆ կը մասնակցի կայսերական կառավարութեան դէմ տեղի ունեցած ցոյցերուն, և թէ միլիցիներն զարգացած լինելով, անկարգութիւնը կը տիրէ գաւառին մէջ, և չկարծուիր որ անվայել դէպքեր տեղի ունենան այլ ևս ։

Պ. Լէմնիոտա Զարիֆի և տիկինն երէկ առաւօտ Փիլիպէ գնացին, ընկերակցութեամբ յիշեալ քաղաքի Զօգրաֆեան վարժարանաց տնօրէն Պ. Բոնս Թանմէնիտիի՝ որ քանի մ'օրէ ի վեր մայրաքաղաքս կը գտնուէր ։ Կըսուի թէ Պ. Զարիֆիի այս ուղևորութեան նպատակն է ընդարձակ գետին մը գնելով՝ մեծ շէնք մը կառուցանել, ուր պիտի կեդրոնանան իւր բարեգործական հօր ձեռամբ բացուած համանուն վարժարանք ։ Պ. Զարիֆի 3000 ոսկւոյ գումար մը յատկացուցած է այս գործին։

Կրետէի կուսակալ Ֆոթիատէս փաշայէն՝ կայսերական հեծելազօրաց Միրլիվա Էտհէմ փաշայի ուղղեալ երկրորդ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ն. Վսեմութեան եղբայրն սպաննող ոճրագործը ձերբակալուած է և թէ այդ ոճրագործութիւնը վաղեմի վրէժխնդրութեան մը հետևանքն է ։

Ուրբաթէն շաբաթ լուսնալու գիշերը, Սէլանիկի նաւահանգստին մէջ խարսխեալ աւստրիական առագաստանաւ մը, որ 10,000 սնտուկ քարիւղ կը պարունակէր, բռնկելով այրեր է ամբողջովին, և բոցերը շուրջը տարածուելով՝ մաքսատան շէնքերէն մին, ինչպէս և 13 մեծ ու փոքր նաւակներ այրեր են նոյնպէս։ Նաւերուն մէջէն բան մ'ազատել կարելի չէ եղած, իսկ մաքսատան մէջի ապրանքներն ազատեր են։

Վերջին տեղեկութեանց նայելով, Լոյտի ընկերութեան շոգենաւերէն մին՝ հաւանականաբար Թէբէօ՝ թեթևապէս վնասուեր է այս սոսկալի արկածէն։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՌԻՒԹԷՐ

(Ռէօյթէր հեռագրական գործակալութեան Կ. Պոլսոյ ներկայացուցիչ Տր. Իւէլինկըր հետևեալ հեռագրերն հաղորդած է խմբագրութեանս։)

Լոնտրա, 11 ապրիլ

Այս առաւօտեան Տէյլի Նիւզ կ'ըսէ. «Անգլիական կառավարութիւնը չպիտի դադրեցնէ իւր պատերազմական պատրաստութիւններ այն տասնևհնգօրեայ պայմանաժամին պատճառաւ, զոր Ռուսիա խնդրեց՝ բացատրութիւններ պահանջելու Քոմարոֆ զօրավարէն ։ Ընդհակառակն, Անգլիա պիտի շարունակէ զանոնք մեծ ազդուութեամբ և որոշած է իսկ աւելցնել զայնս ։»

Լոնտրա, 11 ապրիլ

Իրաց վիճակն ընդհանրապէս յոյժ տագնապալից կը նկատուի ։ Հակասական զրոյցներ կը պտըտին գերմանական միջնորդութեան վրայ, բայց այդ զրոյցք չեն կրցած փարատել Ռուսիոյ և Անգլիոյ միջև մօտալուտ և յոյժ ծանր գժտութեան մը երկիւղներն ։

Լոնտրա, 11 ապրիլ

Թէհրանէն այս առաւօտ եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ դաւադրութիւն մը երևան ելած է Թէհրանի միջնաբերդը գտնուող պետական բանտարկելոց մէջ, որոց նպատակն էր փախչիլ։ Քաղաքին մէջ նմանապէս ձերբակալութիւնք եղած են, և քաղաքական կարեւորութիւն կ'ընծայուի գործին ։

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

Լոնտրա, 13 ապրիլ

Տէյլի Նիւզ կ'ըսէ թէ քաղաքական կացութիւնը փոփոխութիւն կրած չէ, բայց խաղաղական լուծման մը հաւանականութիւնն ալ նուազած չէ ։

Ստանտըրտի թղթակիցն, որ կ'ընկերանայ Սըր Բ. Լըմստընի, ապրիլ 7 թուականաւ կը հեռագրէ թէ Ռուսք կը յառաջանան Մուրղապ գետին երկայնութեամբ ։

Բեդրսպուրկ, 13 ապրիլ

Ռուսիա, հաշտութեան նպատակաւ, քանի մ'օրէ ի վեր Անգլիոյ ներկայացուցած է նոր առաջարկ մը՝ ռուսօ-աֆղան սահմանագլխի գծման մասին ։

Երկու կառավարութեանց տրամադրութիւնք խաղաղասէր են։

Փարիզ, 13 ապրիլ

Անգլօ-ռուս խաղաղութեան պահպանման յոյսը ուժ կը գտնէ ։ Զրոյց կը պտըտի թէ Գերմանիա միջնորդութիւն պիտի առաջարկէ ։

Լոնտրա, 13 ապրիլ

Երեսփոխանական ժողով. — Պ. Կլատսթօն, հարցման մը պատասխանելով, կը յայտարարէ թէ Անգլիոյ պարտականութիւնն է պնդել որպէս զի կատարեալ քննութիւն մը կատարուի ռուսօ-աֆղան դէպքին վրայ ։ Պ. Կլատսթօն կը յաւելու թէ կառավարութիւնը Սըր Բ. Լըմստընի ղրկած է Քոմարոֆ զօրավարին տեղեկագիրը, և թէ անհնար է գիտնալ թէ ո՛ր օր պիտի առնուի պատասխանը ։ Կը վերջացնէ ըսելով թէ կառավարութիւնն ո և է տեղեկութիւն ստացած չէ ո՛չ Սըր Բ. Լըմստընի և ո՛չ Ռուսաց յառաջխաղացութեան վրայ ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա. 2 Ապրիլ

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ պանքայի)	111
» » » (վճռկնկն)	110 25
» Բարիզի » (պանքայի)	22 82 1/2
» » » (վճռկնկն)	22 90

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսօլիտէ

		Դահեկան
Մէկ երեկոյ գոց.	(Միայն D. Սէրի	17 7
օրուան գոցուելէն վերջը	»	17 8
Երայի մէջ	»	— —
առաւօտուն բացուեցաւ	»	17 7 1/2
արծրագոյն գին	»	17 10 1/2
ստորագոյն »	»	17 7 1/2
կէս օրին	»	17 10

փոխառութիւն 1858) » 1862)	Ա. Սէրի Գ. Կ. Ա. Ռ.	28 30
» 1860) » 1863) » 1872)	B. » »	17 30
» 1865) » 1869) » 1873)	C. » »	17 5½

Ունիֆիէ Եգիպտական

Նրէկ իրիկուն գոցուեցաւ	68 30
Այս առաու բացուեցաւ Գ. Կ.	69 2 1/2
Կէս օրին	69 2 1/2

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօրիէթէ Ժէնէրալ	Գ. Կ.	Անգլ. Լ.	3 15
Փոխարէ Ժէնէրալ	» »	Օսմ. »	6 30
Գանք տը Գոնս	» »	» »	5 12
Սօս. Շանժէ է վալէօր	» »	» »	3 32
Թրամուէյ	» »	» »	267 1/2
Բուժէլիի երկաթուղի		Ֆր.	42 50
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ		»	364
Բաժնեթուղթ Լաւրիօնի		»	65

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 Ֆրանքնոց	»	87 28
Անգլիական ոսկի	»	110 16
Բօլ Իմբէրիալ	»	90 12
Փրիմէ	»	51 15
Ռուսալի թղթադրամ	»	9 2
» արծաթ	»	89 25
Ֆիօրին	»	9 2
Մէճ. արծ. (տարբ.)	»	107 14
Վեցնոց	»	102 20
Հինգնոց	»	102 20
Մէճիտիէ	»	98 20
Զլին	»	—
Թղթադրամ	»	—

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 13 Ապրիլ, ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ գոցուեցաւ	94 7/8
Օսմ. » Սէրի Տ. բացուեցաւ	15 1/2
» » » գոցուեցաւ	15 1/2
» » » Ա.	28 1/2
» » » Բ.	17 1/2
» » » Գ.	15 1/2
փոխառութիւն 1877	72 1/2
Գանք Օթոման	11 5/8
Ռուսական փոխառ. 73 (գ. կ.)	82 3/4
Եգիպտական միացեալ (Ունիֆիէ)	61 1/2
» առանձն. (բրիվիլէժիէ)	81 3/4
Տայրա Սանիէ	58 1/2
Տօմէնիալ (փոխառ. Ռօչիլտ)	79 1/2
Հունգարական պարտաթուղթ 1877	—
Փոխանակութիւն Բարիզի վրայ	—

Վիէննա, 13 Ապրիլ, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	126
Օսմանեան երկաթուղի	20 50

Բարիզ, 13 Ապրիլ, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 % բաց	108 45
» » 3 % բաց	77 62 1/2
Օսմանեան քօնսօլիտէ բացուեցաւ	15 70
» » գոցու. գ. կ.	16 5
Միացեալ պարտք Սէրի Բ.	18
» » Գ.	16 10
» » Դ.	— —
Օսմանեան երկաթուղի	42 12 1/2
» Բէժիի բաժնեթուղթք	— —
Գանք Օթոման	547 50
Գրէտի Լիոնէ	525
» Ֆոնսիէ գ. կ.	1312
Բաժնետոմս Լիոնի (գուբ. կոր.)	1260
Սուէզի ջրանցք	2030
Ռուսական 5 % 1877ի (գ. կ.)	83 1/4
Իտալական Ռանթ (գ. կ.)	93 25
Եգիպտական միացեալ գոց	316 25
Սպանիական (արտաքին) (գ. կ.)	57
Բրիօրիթէ Թիւրք	368 75
5 % Հելլենական (գ. կ.)	313 75
Չէք Լոնտրայի վրայ	25 41

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Ապրիլ 13, ժ. 10, վ. 45

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 %	108 30
Օսմանեան »	15 95
Եգիպտական միացեալ	313 75

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

«ԱՐԵՒԵԼՔ»Ի

ԿԱՐՍ, 17 Մարտ

Եւ չկայ իմ մէջ այն քաղցր հաւատը
Դէպ չքնաղ ծնունդը այդ երազ՝ երի,
Բոլորն անխնայ դարձան կոշտուտ
Իրականութեան կոպիտ ձեռքերի։

ՇԻԼԼԵՐ

Նօթ տարի անցաւ այն օրից, երբ ռուսական թնդանօթները դադարեցին որոտալ Կարսայ պարիսպների տակ և այնքան յամառութեամբ դէմ դնող բերդ-քաղաքի արիւնաթաթախ պատերի վրայ սկսեց շողշողալ հիւսիսային արծուենիշ դրօշակը։

1877 թուականի Նոյեմբեր վեցն էր այդ օրը։

Նօ՛թ տարի անցաւ այդ օրից։ Ռուսական կառավարութեան ձեռքը ընկնելուց յետոյ, քաղաքը փոքր առ փոքր սկսեց կերպարանափոխուել. բայց ձգենք մի վարագոյր այդ խաբուսիկ կերպարանափոխութեան վրայ. անցնինք ժողովրդի, բուն երկրագործ դասի վիճակին թէ ի՛նչ փոփոխութիւն կրեց նա այդ տարիների ընթացքում։

Կարսայ նահանգը շրջապատուած է ամենառատ և պտղատու արօտատեղիներով և մարգերով։ Ռուսական տիրապետութիւնից յետոյ, մանաւանդ Ֆրանկինի նահանգապետութեան ժամանակ, այդ կողմերը լցուեցան Մալականներով (ռուս աղանդաւորներ), որոնց ռուս կառավարութիւնը ընդարձակ հող և ամեն միջոց տուեց մշակելու։ Տեղային հայ և թուրք գիւղացիներ համարեա թէ քշուեցան։ Բոլոր դրանց պատկանած հողեր, որոնց համար շատերը 50ից սկսած մինչեւ 500 օսմանեան ոսկի էին վճարել և օրինաւոր պաշտօնագրեր ունէին նախկին կառավարութիւնից, խլուեցան առանց բացատրութեան և տրուեցան Մալականներին, և այսօր երբ մօտիկ Ալեքսանդրօպոլը ամբողջ գաւառը հողային սաստիկ տագնապի մէջ է, երբ այն կողմերի գիւղացիք 50 ընտանիքը այժմ 150 լինելով, դարձեալ կառավարւում են տասնեակ տարիներ առաջ բաժանված հողերով, այս կողմում ամենաընդարձակ տարածութիւններ տրուած են այդ ծոյլ և անհոգ ժողովրդին, որ բացի այդ և ծանօթ չլինելով հողի, կլիմայի հետ, չեն կարողանում օգտուել նրանից. բայց և այնպէս օրէ ցօր բերվում են, օրէ ցօր լցնվում են նրանցով այս կողմերը։

Բայց ինչո՞ւ մի այդպիսի անարդարութիւն . . . ։ Այդ [illegible] պատասխանը ես դարձեալ չեմ դնում. ուղեցողը թող իր կամեցածին պէս մեկնի նրանց։

* * *

Երկու շաբաթ առաջ այս տեղի ուսումնարաններն էլ փակուեցան։ Փակուել են և բոլոր Կարսայ նահանգում գտնուածները, նոյնպէս և Ալեքսանդրօպոլ՝ ուր հազարի մօտ երթեւեկ աշակերտներ և աշակերտուհիներ մնացել են առանց ուսման։ Անկարող եմ նկարագրել այն լաց ու աղաղակն որ բարձրացրին աշակերտներն ուսումնարանները փակելու ժամանակ։ Նոյն ինք ոստիկանապետն, որ մի լեհացի ազնիւ անձնաւորութիւն է, իրեն զսպել կարող չեղաւ և համարեա թէ արտասուեց։ Իսկ Ալեքսանդրապոլում, ո՜հ, սարսափելի է երբ պատմում են. դառն մրմունջով, արտասուք աչքերում հարիւրաւոր աշակերտուհիներ թողել են այն սուրբ շէմքը, ուր այնքան բարի և ազնիւ զգացումներ ստացել էին միշտ . . . թողել են արտասուելով, թողել են անիծելով։

Թիֆլիսի առաջնորդը հրամայել է բոլոր պարապ մնացած ուսուցիչների տարեկան ամբողջ ռոճիկը վճարել. այդպէս կարգադրել է կարծեմ Սինոդը։ Որտեղ փող եղել վճարել են, իսկ չեղածնե՞րը . . . էդ էլ երեւի Աստուած ողորմած է։

Այդպիսի մի դառն ժամանակ ժողովուրդը արտասուք աչքերում նայում է Լուսաւորչի թափուր աթոռին, նայում է և սպասում է սրտատրոփ. և ո՞ւմը. Նրան, նրան որ արտասուք աչքերում և սիրտը լիքը բզգացմամբ գնում էր իւր արտասուքով թացացնել ու հանգցնել կրակի մէջ այրող իւր հայրենեաց աւերակների վերջին մոխիրը. թող գայ, թող արտասուք թափի հարիւրաւոր փակուած ուսումնարանների վրայ. կրակը չ՛այրեց նրանց, երկրաշարժը չեր աւերել նրանց. բայց այսօր ամենն էլ դատարկ են, դատարկ աւելի վատ աւերակներից։

ԷԼԻ ՆԱ.

ՊԱՍՐԱ, 4 մարտ

Քանի մ'ամիսներէ ի վեր առժամեայ պաշտօնով այս կողմերս գտնուելուս առթիւ թէ՛ քաղաքիս կացութեան և թէ՛ տեղւոյս ազգային վիճակին վրայ անձամբ քաղած զանազան տեղեկութիւններ կը փութամ հաղորդել Արեւելքի ընթերցողաց։

Պասրա՝ Շաթ-էլ-Արապ գետոյն աջ եզերքին ներսի կողմը հաստատուած քաղաք մի է, ծովէն շոգենաւով եօթը ժամու չափ հեռի։ Բնակչաց մեծ մասը մահմետական արաբացի է, մէկ փոքր մասը քրիստոնեայ՝ որք մեծաւ մասամբ քաղդէական եկեղեցւոյն կը հետեւին, և 21 տուն ալ լուսաւորչական հայ. օտարազգիք՝ որք վաճառականութեամբ և [illegible] կ'զբաղին, փոքրամասնութիւն մը կը կազմեն։ Քաղդէացիք՝ որք պապադաւան են, ընդարձակ և նորաշէն հոյակապ եկեղեցի մ'ունին, իսկ հայք հնաշէն և գմբեթն ու կանանց վերնատունը տարիէ մ'ի վեր փլած փոքրիկ եկեղեցի մը։ Օտար տէրութեանց ներկայացուցիչներէն միայն անգլիական հիւպատոս մի, գաղղիական փոխ-հիւպատոս մի և պարսկական շեհպէնտէր մի կայ։ Քաղաքս որ բաւական տարիներէ հետէ միւթեսարրըֆութեամբ կը կառավարուէր Պաղտատի կուսակալութեան իրաւասութեան տակ, գրեթէ տասն ամիս կայ որ զատ կուսակալութեան վերածուած է, բայց մինչեւ ցայսօր կուսակալը որոշուած չէ. կուսակալի տեղակալութիւնը տեղւոյս զինուորական հրամանատար Վեհիպ Ալի Րիզա փաշայի յանձնուած է, որ իւր բնածիր ազնուաբարոյութեամբը, քաղաքավարութեամբն և իմաստուն ու արդարակորով վարչութեամբը համայն բնակչաց և օտարաց մեծ համակրանքը գրաւած է և ինչպէս որ կը կարծուի՝ խիստ հաւանական է որ կուսակալութեան բարձր պաշտօնն ալ վերջնականապէս իրեն յանձնուի ի մօտոյ, որում կարի արժանի իսկ է. նա՛ մանաւանդ քանի տարիներէ ի վեր այս կողմերս գտնուելուն պատճառաւ տեղական պիտոյից ալ խիստ քաջածանօթ է։

Քաղաքը գետեզերքէն բարձր դիրքի մը մէջ չգտնուելուն համար խիստ ճախճախուտ և ճահիճներով շրջապատեալ է և երկրին տեղագրական կազմուածքն ամենամանր քարի կտոր մի անգամ զուրկ կաւային ըլլալուն՝ սոյն ճահիճները միայն վիճակի մի մէջ կը մնան գրեթէ ամբողջ տարին, հետեւաբար ջերմն ամեն եղանակի մէջ տեղական ախտն է։ Բայց անցեալ տարի Եփրատ և Տիգրիս գետերուն արտասովոր ողողումէն սոյն ճահիճներուն թիւը բնականաբար բազմացած և ջերմն ալ իւր բոլոր զօրութեամբ տիրելով՝ համաճարակ ախտի մը վերածեալ էր, այնպէս որ չափազանցութիւն ըրած չեմ ըլլար եթէ ըսեմ թէ տուն չկար՝ ուր քանի մը հիւանդներ չգտնուէին անկողնոյ ծառայող. կրնամ ըսել թէ բոլոր քաղաքն ընդհանուր հիւանդանոցի մը փոխարկեալ էր և տիրող ջերմն ալ խիստ վտանգաւոր տեսակէն էր, այսինքն՝ անընդհատ և մաղձային ջերմ բուսածն որ տաք երկիրներու յատուկ է. մահաբեր կոչուածն ամենէ տեսակն ալ պակաս չէր։ Հասարակ ջերմը քաղաքիս ամենօրեայ գլխաւոր հիւանդութիւնն ըլլալով «[illegible]», որում տեղացիք [illegible] անունը կուտան, ամեն տան առաջին պիտոյքներէն մին համարուած է, օրապահիկ հացին համահաւասար. ամենէն աղքատին տունն անգամ գէթ քանի մը դրամ կը գտնուի, իսկ կարող անձինք սրուակներով կը գնեն. վաճառողներն են փերեզակներն և մանրավաճառներն. արդէն քաղաքին մէջ դեղարան ալ չկայ։

Ամառուան խիստ տաք եղանակին մէջ ջերմութեան աստիճանն հարիւրաչափ ջերմաչափով 39° և 40°ին մէջ տեղը կը տատանէր շուքին մէջ, բայց կը հաւաստեն թէ մինչեւ 45° աստիճան բարձրացած ունի ուրիշ տարիներ։ 24 ժամուան մէջ հինգ կերպի կը փոխուէր ջերմութիւնն, այսինքն առտուն, ցերեկն, արեւն մայրը մտնելէն երկու երեք ժամ յառաջ, որ օրուան ամենէն տաք ժամանակն է, առջի իրիկուընէ մինչեւ կէս գիշեր և կէս գիշերէն մինչեւ արշալոյս։ Գիշերներն ընդհանրապէս խիստ խոնաւ էին և ամենաթեթեւ հովի նշոյլ մի անգամ չըլլալուն՝ անհանդուրժելի տաք և շունչ առնելու մեծ դժուարութիւն կը զգար մարդ, բայց օգոստոս 15էն ի վեր օդերուն տակաւ առ տակաւ փոփոխութեամբն տիրող ախտն ալ նուազիլ սկսաւ և երբ դեկտեմբեր և յունուար ամսոց մէջ ջերմութեան աստիճանն զրօէն վեր մինչեւ 9° իջաւ, հիւանդութիւնն բոլորովին դադարեցաւ, բայց հասարակ ջերմն դարձեալ չպակսեցաւ, որոյ վրայ եղանակի հիւանդութիւնք ալ աւելցան։ Թէեւ ջերմաչափն 9° աստիճան ջերմութենէն վար չիջաւ, բայց ցուրտն խիստ զգալի էր, այնպէս որ կարծես թէ սառնամանիքով պատած եղանակի մը մէջ կ'ապրէինք։ Ձիւն երբէք չձիւներ այս տեղ, բայց ստէպ կ'անձրեւէ. հիմայ գարնան եղանակի մի մէջ կը գտնուինք, որ ամենէն ախորժելի եղանակն է տեղւոյս համար մինչեւ գրեթէ ապրիլի վերջերն. արդէն ջերմաչափն 16° և 18° աստիճաններուն մէջտեղն է ցերեկներն, գիշերներն ալ երկու երեք աստիճան վար կ'իջնայ։

Քաղաքիս գլխաւոր բերքն է արմաւ, որոյ բազմաթիւ տեսակները կան և ամենէն անուանիներն ու համեղներն են [illegible] բուսածն, որ հռչակաւոր է և Մէտինէէն տուփերով եկած բուն արմաւէն խիստ կը նմանի թէ՛ համին և թէ՛ տեսակին կողմանէ. անկէց զատ կուգան հալլա՛վէ, խատրա՛վէ և խուբրա՛վէ կոչուածներն, որոցմէ մանաւանդ հալլա՛վէն, որ աւելի կը դիմանայ, հազարաւոր փոքրիկ սնտուկներով, թանձրաթղթէ յատուկ տփեակներով և զամբիւղներով ու տիկերով Լոնտրա և խիստ փոքրիկ մաս մ'ալ այլուր, նաեւ Պօլիս կը ղրկեն եւրոպացի վաճառականք և փոխադրանաւերն են ընդհանրապէս անգլիական շոգենաւք։ Արմաւի բարձրաբերձ ծառերն քաղաքին ամեն կողմն և երկու գետեզերաց վրայ անտառներ կը կազմեն, որոց արտաքուստ տեսքն դիւթիչ և խիստ սքանչելի է։ Քաղաքիս վաճառականութիւնն Եւրոպացւոց ձեռքն է, որք արմաւէն զատ՝ ցորեան, գարի, կորեակ, բուրդ և մորթի վաճառականութեամբ կը զբաղին. սոյն վերջիններն Պաղտատի և շրջակայից բերքերն են, զորս երկու ընկերութեանց շոգենաւերն կը փոխադրեն. սոյն ընկերութեանց մին Իտարէի Օսմանէ կը կոչուի և միւսն Լինչ եղբարց անգլիական ընկերութիւնն է, որ միմիայն երկու շոգենաւ բանեցունելու արտօնեալ է. կանոնաւորութեան և ճշդութեան մասին սոյն վերջին ընկերութիւն նշանաւոր է, որոյ պաշտօնն է եւս ամեն շաբթու Պօմպայէն եկող թղթաբեր շոգենաւին Հնդկաստանէն և Եւրոպայէն բերած թղթատարութեան բազմաթիւ պայուսակներն Պաղտատ տանիլ՝ ներսերը ղրկուելու համար և այն կողմերէն եկածներն ալ Պաղտատէն բերել. Պաղտատ քաղաքն 3-4 աւուր ճանբայ հեռի է շոգենաւով։ Խիստ ցաւալի է անսնել թէ շոգենաւի օսմանեան ընկերութիւնն անկեալ վիճակի մի մէջ է, յոռի վարչութեան մը պատճառաւ։

Եւրոպացւոց թաղն, ինչպէս նաեւ մաքրանոցք, մաքսատունք, նաւարանը, նաւահանգստի տեսչութիւնը, զինուորական հիւանդանոցն և զինուորական հրամանատարին ապարանքն նաւահանգստին կողմն են, բուն քաղաքն նաւակով երեք քառորդ ժամու չափ ներսն է, ուր երթալու համար երկու եզերքն բարձրահասակ արմաւենիներով շրջապատեալ նեղ և տեղ տեղ պտուտաւոր գետակի մի կանցնի, որոյ խիստ զմայլեցուցիչ տեսարանն՝ տերեւոց քաղցրահնչիւն սօսաւիւնին հետ խառնուելով՝ պահ մի մոռցունել կուտայ մարդուս կլիմային վատառողջութիւնն ու բնիկներու կենաց վայելքներէն այն ամեն կերպ զրկումներն, որոց բնականաբար դատապարտուած է մարդ այսպիսի անընկերական օտարութեան մը մէջ։

Գետին ջուրն օրը քանի մի անգամ խիստ զգալի կերպով կ'աճի մակընթացութեամբ և կը նուազի տեղատուութեամբ, որոյ վրայ մեծ ազդեցութիւն ունի լուսինն, որովհետեւ լրման միջոցին ջրերը կը սկսին խիստ նուազիլ և ծնունդէն սկսեալ մինչեւ ցլրում աճիլ։ Քաղաքս ուրիշ ջրոյ աղբիւր մի չունի. միակ ըմպելի ջուրն է գետին ջուրն, որ լիճերուն և ծովու ջրերով խառն տղմուտ ջուր մ'է կանաչագոյն ու անհամ և հողէ շինուած մանաւոր ամաններէ մզելով միայն կրնայ ըստ կարելւոյն ըմպելի լինիլ. բնիկները սովորած են նոյնութեամբ խմել սոյն ջուր առանց մզելու։

Քաղաքիս վրայ սոյն տուած տեղեկութիւններովս բաւականանալով՝ տեղւոյս ազգայնոց կացութեան և ազգային վիճակին վրայ կը խոստանամ խօսիլ ուրիշ անգամ։

ՏՐ. Ֆ. Ց. ՄԱԼԷՉԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

«ՎՐԱՑԻ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱՂՋԻԿԸ»

Այս անգամ Ամերիկայէն կուգայ հետաքրքրաշարժ պատմութիւն մը որ գուցէ ոմանց համար հաճելի չ'ըլլայ լսել, բայց ապահովապէս ընդհանրութեան համար օգտակար և միանգամայն հրահանգիչ է։ Չին առեն վէպի ձեւ կուտան եղեր շատ մը բարոյական սկզբունքներու՝ ժողովրդեան միտքն առանց յոգնեցնելու ուսուցանելու համար. գիտութիւնն ալ այժմ այս կարգի ուսուցիչներն ունի և զարմանալին սա է թէ գիտութեան ճշմարտութեանց հակառակ չարժիլ ուղղողներն և ռամիկներու, միամիտներու երեւակայութիւնները շլացնելու աշխատողներն են որ ակամայ բայց լաւագոյն դասախօսներն են այս տեսակէտով։

Ամերիկա, արտակեդրոն և [illegible] զարմանալիներու երկիր, թէ՛ նոր և թէ՛ նորութեանց աշխարհ, գիտական գիւտերու մասին վերջերս մեծ առաջնութիւն ստացած ըլլալով, անդ պատահած իրողութիւն մը Արեւելքի ընթերցողաց ներկայանալու արժանի է։

Միացեալ Նահանգաց մէջ օրիորդ մը կայ եղեր Լ. Հ. անունով, որոյ գիտական մականունն է «Վրացի մագնիսական աղջիկը»։ Այս աղջիկը առանց ջղային զօրութիւնն ի գործ դնելու անկենդան առարկայները շարժելու կարողութիւն ունի։

Պ. Նիւքօմպ, Սայընս լրագրի տնօրէնը, տեսնելով որ ժողովուրդը կը յուզուի Վրացի մագնիսական օրիորդին հակադրական արարքներով, իբր ճշմարիտ ամերիկացի լրագրապետ ինքն ալ յուզուեցաւ և արդարեւ գիտական թերթ մը եթէ այս կարգի դէպքերու մէջ առաջնակարգ ընթացք մը չ'ըլլանէ, իւր պարտականութեանց դէմ մեղանչած կ'ըլլայ։ Ուրեմն Պ. Նիւքօմպ պարտ անձին համարեց երթալ ականատես ըլլալ Օր. Լ.ի փորձերուն, և եթէ հարկ էր՝ մասնակցիլ ու քննել։

Պ. Նիւքօմպի պատմածներ էին թէ՛

Հանդիսատես անձանց ամենէն զօրեղն թեթեւ գաւազան մը թող ուժով մը բռնէ։ Օր. Լ. մատներովը միայն գաւազանը շօշափելով այդ անձն սրահին մէջ կը շրջեցնէ և բոլորովին ուժաթափ անկեան մը կը նետէ։

Ուրիշ հանդիսական մը որ գաւազանն առնէ, Օր. Լ. թող երկու ծայրերուն դպչի և ահա՛ գաւազանը կ'սկսի շրջիլ այնպիսի զօրութեամբ որ բռնող անձին ձեռքերը կը վիրաւորուին եթէ դիմադրել ուզէ։

Ներկայից միջեւ բարձրահասակ անձ մը կը հրաւիրուի աթոռի մը վրայ նստել. և մագնիսական օրիորդը աթոռին ներքեւ ձեռքը դնելով մարդ ու աթոռ կը բարձրանան և ինչ որ աւելի զարմանալի է, ձեռքերն չդպչիր աթոռին։

Նստող անձէն կը խնդրուի որ ձեռքերն աթոռին ներքեւ դնէ և փորձող օրիորդն այսպէս ալ կ'ապացուցանէ թէ առանց իւր ձեռքերն դպցնելու կը կատարէ իւր փորձերը։

Երեք չորս անձերէ կը խնդրուի որ աթոռ մը չորս կողմէն բռնեն։ Օր. Լ. աթոռին մի քանի տեղերէն կը դպչի և ահա աթոռն այնպիսի բուռն շարժումներով կ'սկսի ցատկոտել որ անկարելի կ'ըլլայ զանի հանդարտեցնել։

Սեղանի մը վրայ գլխարկ մը կը դրուի, Օր. Լ. ձեռքերն անոր վրայ կ'երկնցնէ և ահա գլխարկը վեր կ'ելլէ որպէս երկաթի կտոր մը մագնիսի ազդեցութեամբ, և այնպէս ուժգին որ տեղը կեցնելու համար բռնուած առեն կը պատռի։

Այս ամենքը լսելէ վերջ հարկաւ կ'սպասէք որ ըսեմ—«Երկինքէն երեք խնձոր կիյնայ . . .», ինչու որ հինաւուրց առասպելէ մը մեծ տարբերութիւն չունի։ Սակայն կը սխալիք, Օր. Լ. յիրաւի կը կատարէ այս ամեն փորձերը և ամեն հանդիսատեսք հաւատացողք թէ թերահաւատք կ'առտուգեն թէ Օր. Լ. գուցէ անբացատրելի բայց վերջապէս իրական կարողութիւն մը ունի, կարողութիւն որով գուցէ օր մը պաշխարհն ալ վերցնէ առանց յենարանի, թէպէտ և Նիւթըն յենարան մը անհրաժեշտ կը դատէր։

Մեր լրագրապետը այս ամենը լսելով և ինքն եւս համոզուելու պատրաստ, այլոց հետ միանալով վճռեց [illegible] նիստ մը ընել Վօլթա Լապօրաթօրի կոչուած աշխատանոցին մէջ։ Հաճութեամբ, Օր. Լ.ի փորձակից գիտունք ամեն տեսակ մանրակրկիտ միջոցներ ձեռք առած էին ո և է խաբէութեան մը դէմ։ Սրահը մութ չպիտի ըլլար. ոչ ոք ձեռքերը սեղանին տակ պիտի պահէր. ապահով էին թէ ոգիները ըստ իրենց վարժի և պատշաճ սովորութեան չհաւատացողներու ներկայութեան աջակցութիւննին զլանալու անկրթութիւնն չպիտի ունենային. վերջապէս ամենայն ապահով միջոցներ ձեռք առնուած էին գիտնականաբար։

«Վրացի օրիորդը» ուժեղ աղջիկ մ'է, միջին հասակէ աւելի բարձր, բայց սակայն առերեւոյթ մեծ ջղային զօրութիւն ունենալ չթուիր։

Գիտական քննութեան խստապահանջ պայմաններու մէջ փորձելէ առաջ յարմարագոյն թուեցաւ թողուլ որ Օր. Լ. անգամ մը սովորական պայմաններով փորձերը կատարէ։ Հանդիսական մը առաւ յարդէ գլխարկ մը զոր շրջելով ձեռացը մէջ բռնեց. Օր. Լ. ձեռքերն երկնցուց այնպէս որ բթամատներուն ծայրերն գլխարկին մէջ դպչին։

Նախ արդիւնք մը չունեցաւ, բայց մի քանի փորձերէ վերջ գլխարկը թեթեւ մը վեր ձգուեցաւ որպէս ելեկտրական զօրութեամբ մը։ Այն առեն խնդրեցին որ փորձը նորէն սկսուի և ամեն անգամ որ գլխարկը վեր կ'ելլէր՝ յայտնի էր թէ ձգող զօրութիւնը ներքին եզերքներէն կ'ազդէր գլխարկին վրայ, ուրկէց փորձողին բթամատները կը բռնէին։ Հանդիսականներէն մին լաւ մը ցոյց տուաւ Օր. Լ.ի թէ գլխարկն այս կերպով վեր առնելու համար յաջող պայմաններն որո՛նք են։ Իսկ բոլորովին սխալ գտնուեցաւ այն կարծիք թէ գլխարկն կը կը պատռի եթէ ձեռաց մէջ բռնողն չթողու որ բարձրանայ։

Այսպէս անցան գաւազանի փորձին։

Պ. Նիւքօմպ ձեռացը մէջ գաւազան մը առաւ։ Օր. Լ. ձեռքերով դպաւ գաւազանին երկու ծայրերուն և ահա՛ սկսաւ դառնալ այնպէս ուժով որ քիչ մնաց Պ. Նիւքօմպ գետին պիտի իյնար։ Երբ փորձը կրկնուեցաւ, հանդիսականք կրցան մեկնել։ Ստուգուեցաւ որ թէպէտեւ ի սկզբան թեթեւ մը գաւազանին կը դպչէր, բայց յանկարծ ուժով մը կը սեղմէր գաւազանին ծայրը թէպէտեւ վայրկենական արագութեամբ և անոր շարժումները միայն այն պահուն տեղի կ'ունենային. իսկ ամենապարզ բացատրութիւն մը ունի զօրեղ անձի մը գաւազանին շրջելուն դիմադրելու անկարողութիւնը, քանի որ օրիորդը գաւազանին ծայրերէն կը ճնշէր և ինչպէս կենդրոնին թեթեւ մի դունտ բազմապատիկ ծանրութեամբ բեռ մը կը հաւասարակշռէ, նմանապէս օրիորդին ձեռաց ճնշումը գաւազանին ծայրէն տեղի ունենալով ամենէն զօրեղ մարդն անգամ կրնայ տապալել։

Գաւազանին միւս փորձին անցնիլ ուզեցին, բայց Օր. Լ. յայտարարեց թէ այդ տեսակ բան ուրիշ անգամներ չէ բրած, հակառակ հանդիսականաց վկայութեան։

Ուրեմն աթոռի փորձին անցան։

Բայց հոս խաբեբայութիւնը բոլորովին յայտնուեցաւ։ Անտարակոյս, օրիորդը անկարող էր մէկ ձեռքով մարդ մը աթոռովն հանդերձ վեր առնելու, այլ երբէք այս տեսակ բան բրած չէր բայց եթէ այն որ անդբրաւ, պարզապէս աթոռին տակէն մատերն միայն ցցելով դէպի մէկ կողմ ծռելն, որով վրան նստողն գետին կ'իյնայ և դաւ կ'ըսեն։ Այս փորձը մի քանի անգամներ կրկնուեցաւ և ամեն անգամ Պ. Նիւքօմպ կրցաւ ստուգել թէ փորձողին ձեռքերն կը ճնշէին աթոռին տակէն և թէ ճնշման ուղղութեամբ կը շարժէր աթոռը։

Վերջապէս ներկայից մէջէն երեք անձերէ խնդրուեցաւ որ աթոռ մը վեր բռնեն։ Ամենէն ծիծաղելին այս փորձն էր. Օր Լ. խիստ թեթեւապէս մատերովը կը դպչէր աթոռին, մինչդեռ այս անձինք ի զուր կը ճգնէին աթոռն անշարժ կեցնելու և «մագնիսական օրիորդը» մինչեւ շուրջը կը պտտէր առեն առեն մատերովը դպչելով, աթոռը ճնշման ներքեւ կը հեծեծէր և վերջապէս խորտակեցաւ ահագին շառաչմամբ։

Ասոր բացատրութիւնն կարծուածէն շատ աւելի դիւրին է։ Աթոռը բռնող անձինք որ և է նախապատրաստութիւն մը չունէին և միասին չէին խորհրդակցած։ Ամեն մէկը կ'ուզէր աթոռը բռնել և ուժով բռնել որ իւր մասին դիմադրէ ամեն շարժման։ Այսպիսով չորսէն և ոչ մին գիտէր թէ աթոռին շարժումը ուսկից կուգայ, օրիորդին շօշափումներէ՞ն թէ միւս ընկերաց կողմանէ, այնպէս որ ամեն մէկը իրեն կողմ քաշելով աթոռը խորտակեցաւ։

Փորձերուն այս մասը գտաւ ահա իւր արժանաւոր մեկնութիւնը, ինչպէս ամեն տեսակ նմանօրինակ փորձեր կը գտնեն գիտական ակումբներու առջեւ։ Իսկ հոգիները եայլն այս անգամ եւս իրենց բացակայութեամբը փայլեցան։

Երբ ամեն բան յայտնուեցաւ, ուզեցին գործիքով չափել թէ ի՛նչ աստիճան է Օր. Լ.ի ձեռաց զօրութիւնը։ Բայց ի զուր, այս անգամ օրիորդը, շուարեալ, առաջին փորձերն ալ չ'կրցաւ կրկնել ու հարկադրեցաւ նիստը փակելու։

Այսու հանդերձ, ինչպէս ամեն կողմ, նոյնպէս նաեւ Ամերիկայի մէջ միամիտներու բնականէ դուրս երեւոյթներ տեսնելու փափագն այնքան մեծ է որ խաբեբայութիւնն ճանչնալով հանդերձ և Սայընսի այս հրատարակութիւնն տեղի ունենալէ վերջ «Վրացի մագնիսական օրիորդը» կը շարունակէր հանդիսաւոր երեւոյթներ տալ և սքանչացնել հանդիսականներն։ Երբ գեղեցիկ երազ մը տեսնենք, արթննալէ վերջ ցաւ կ'զգանք վերջանալուն համար և կը փափագինք որ կրկնուի. նմանապէս եթէ բնութեան գաղտնիքներն իմանալու բաղձանքն ունենալով երբ կը տեսնենք որ անծանօթ ու անիմանալի երեւոյթներ տեղի կ'ունենան, չենք ուզեր ճշդել, չենք ուզեր լսել երբ մէկը մեզ բացատրէ և ցոյց տայ թէ մեր գերբնական կարծածը ամենապարզ օրէնքներու գործադրութեան մի հետեւանք է։ Սակայն ո՛վ որ կ'ուզէ հիանալ, հրաշալի և իրօք մարդկային մտաւորական կարողութեան համար բարձրաստիճան բաներ տեսնել, թո՛ղ գիտութեան ճշմարիտ ճանբուն մէջ մտնէ. բնապատմութիւն, բնագիտութիւն, տարրագիտութիւն, չափագիտութիւն շատ աւելի հրապուրիչ են քան բոլոր «Վրացի մագնիսական աղջիկներ» իրենց մագնիսական փորձերով։

Ց. ԽՈՍՐՈՒՖԵԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Միլիոնատէր մը առանց դրամի.—Շատ լաւ բան է անսահման վարկ ունենալ, բայց աւելի լաւ բան մ'է քովը միշտ ստակ ունենալ։ Հռչակաւոր մեծահարուստն Ռօչիլտ անձնական փորձով համոզուեցաւ այս խօսքի ճշմարտութեան վրայ։ Վերջերս նստեցաւ հանրակառք ի Փարիզ, մոռնալով որ գրպանը սու մ'անգամ չկայ։ Հանրակառքի տոմսակածախը սկսաւ տոմսակի դրամն ստիպմամբ պահանջել։ Ռօչիլտ իւր ո՛վ լինելն յայտնեց և ներկայացուց նմա իւր այցետոմսը։ «Ես ձեզ ո՛չ կը ճանաչեմ, ո՛չ ալ կ'ուզեմ ճանաչել, ձեզմէ սակս կ'ուզեմ, և եթէ չտաք, ձեզ ուղղակի ոստիկանութեան կը յանձնեմ»։ Դժուարին կացութեան մէջ կը գտնուէր Ռօչիլտ։ Վերջապէս գրպանէն հանեց մէկ միլիոն Փրանքի արժէթուղթ մը և յանձնեց տոմսակածախին մանրել զայն. տոմսակածախն յապուշ կտրեցաւ. Ներկայ հասարակութիւն սկսաւ բարձրաձայն խնդալ։ Բարեբաղդաբար այդ միջոցին Ռօչիլտի ծանօթ անձ մը մտեցաւ և վճարեց տոմսակի գինն, 6 սու։

«Ֆիկարօ».—Փարիզեան այդ կարեւոր թերթի խմբագրութիւնն իւր վերջին թիւերէն միոյն մէջ տեղեկութիւններ կը հաղորդէ 1884ի տարեշրջանի հաշուեկշռին վրայ, որոյ համեմատ 2,383,000 Փր. զուտ շահ ունեցած է. յետոյ 70 Փրանք շահաբաժին վճարած է ամեն մէկ բաժնեթուղթի, այսինքն 7.50 Փրանք աւելի քան նախորդ տարին։ Նոյն տարւոյ մէջ 1,200,000 Փր.ի պահեստի դրամագլուխ մը կազմած է, հաւասար ընկերական դրամագլխին։ Վերջապէս Ֆիկարօի բաժնեթուղթերն, որ 1884ի փետրուարի ընդհանուր նստին 995 Փրանքի արժանագրուած էին պաշտօնական տոմարին մէջ, 1885 մարտ 5ին 1,290 Փրանքի արժանագրուած են։

[illegible]—Բոլոնիոյ Օկիւսթ Ստանիսլաւ թագաւորի թոռն, Ֆադէյ Բոնիադովսքի, այժմ կը բնակի Միացեալ-Նահանգաց մէջ ի Պալթիմօր, և Տօքթ. Բեդերսընի ագարակին մէջ հովուութեան պաշտօն կը վարէ։ Ֆադէյ Բոնիադովսքի կը պատմէ թէ 1830ի անցքէն յետոյ, ուր Բոլոնիոյ թագաւորն խապառ զրկուեցաւ իւր իշխանութենէն Ռուսիոյ ձեռամբ, հայրն իւր կնոջ և որդւոյն հետ արեւելքի խորերն գտաւ ինքզինք. մօր մահուանէն քանի մը տարի յետոյ, իւր հօր հետ Փարիզ գնաց 1878ին։ Հօր մահէն յետոյ, մեկնեցաւ Ամերիկա, ուր երկար ժամանակ անգործ թափառելէ յետոյ, վերջապէս յաջողեցաւ Տօքթ. Բեդերսընի ագարակին մէջ պաշտօն մը գտնել իբր հովիւ։

Պելճիքական Աստղ լրագիրը հետաքրքրաշարժ պատմութիւն մը կը պատմէ՝ որ տեղի ունեցած է ի Բրիւքսէլ, երգեցիկ սրճարանի մը մէջ։ Սպասուհիներէն մին, ճեմիշները մաքրելու առեն, կտաւէ քսակ մը գտած է, որ թղթերով լի կը թուէր։ Խեղճն իւր վարպետին տարեր է զայն, և իրողութիւնը ոստիկանութեան ծանուցուեր է։

Քսակը կը պարունակէր 1,800,000 Փրանքի արժողութեամբ արժէթուղթեր, Մոնսի ազգային պանքային կողմէ ղրկուած Բրիւքսէլի ազգային պանքային։ Քսակը փակող կնիքները խզուած էին և պարունակեալ թղթերն ալ խառնուած։ Մինչեւ ցարդ չգիտցուիր թէ քսակը Մոնսէն Բրիւքսէ՞լ ղրկուած միջոցին գողցուած է, թէ նոյն իսկ պանքային դրասենեկաց մէջ։ Ամեն ինչ կարծել կուտան թէ՝ գողը կը յուսար պանքատոմսեր գտնել քսակին մէջ։ Իւր սխալը ճանչելէ յետոյ, փութացած է աներեւութացնել իւր գողութեան արդիւնքը։ Պանքային մէջ, ուր քսակը տարուեցաւ անմիջապէս, տեսնուեցաւ թէ ո՛ և է արժեթուղթ գողցուած չէր։

Զուարճալիք. Փարիզու թերթերուն մէջ կը կարդանք.

—Բայց վերջապէս, պարոն երեսփոխան, ըսել է բան մը չէք ըներ Երեսփ. ժողովոյ մէջ.

—Ընդհակառակն, բարեկամս, կը լռեմ։

* * *

Պորսային մէջ.

— Ա՜հ, բարեկամս, եթէ միլիո՛ն մ'ունենայի. այո, եթէ մէկն ուզէր հարիւր հազար Փրանք տալ ինձ . . . կամ թէ միայն հինգ հարիւր Փրանք . . . և կամ թէ սակի մը փոխ տայի ինձ . . . կամ հարիւր սու . . . սիկար մ'ունի՞ս։

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ
307 միլիոն ֆրանք

ԼԱ ՆԻՒ ԵՈՐՔ

Ապահովադրեալք միայն տէր են երաշխաւորեալ դրամագլխոյն և ընկերութեան բոլոր շահերուն

ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՄԱՐ
ՏՆՕՐԷՆ
Ա. Հ. ՍԻՔԷՑ
ԳՐԱՍԵՆԵԱԿ ԿԱԼԱԹԱ, ՀԱԼԱՃԵԱՆ ԽԱՆ

ԱԶԳ

ՈՏԻՑ ԿՈՇՏԵՐԸ
ՀԻՄՆՈՎԻՆ ԵՒ ԱՌԱՆՑ ՑԱՒԻ
ԿԸ ԲՈՒԺԻՆ
Ցաւուկ դեղէ մը, պատրաստեալ
'ի Ս. ՔԱՍԹՈՐԻՏՍԷ
ԴԵՂԱԳՈՐԾ

Իւրաքանչիւր սրուակի գինն է
5 ղրուշ

Կը գտնուի Մ. Քասթորիտէսի քով, Ղալաթիա, Քարաքէօյի կամուրջին մօտ, Թիւ 5

DRAGÉES MEYNET
D'EXTRAIT NATUREL
DE FOIE DE MORUE

Որքան անձինք կը հրաժարին՝ թէ՛ իրենց և թէ՛ իրենց զաւակաց համար՝ Մորիւ ձկան իւղի օգտակար գործածութենէն, իւր անդուշ զզուանաց պատճառաւ։ Փարիզցի դեղագործ Մէյնէ Մորիւ ձկան իւղի բնական մասը նոյն ծագումն, նոյն բնական կազմութիւնն ունի, ինչ որ ունի իւղն (Թխագոյն ճշմարիտ իւղ)։ Կը պարունակէ անոր բոլոր կազդուրիչ յատկութիւններն և առաւելութեամբ կրնայ գործածուիլ անոր տեղ ամեն պարագայի մէջ, սաստիկ ունենալու անոր անպատեհութեանց և ո՛չ մին։ Արդարեւ բնաւ յառաջ չբերեր ստամոքսի յոգնութիւն, և ամենափափուկ տղան, ամենաքնքուշ աղջիկն դիւրութեամբ կը գործածեն զայն Մէյնէի շաքարահատ կամ Մէյնէի հատիկներու (փոքր շաքարահատք մանկանց համար) ձեւին տակ։

Այդ Շաքարահատք ամենազդու դարման են ընդդէմ արեան սակաւութեան, վատութեան, դեղնութեան, կուրծքի հիւանդութեանց, արեան տկարացման, աղաքինմանց, ուժաչափութեան, ախորժակի պակասութեան, ծերոց տկարութեան, և կը զօրացընեն մանկութիւնն և պատանեկութիւնը։

Մէյնէի շաքարահատք ամենաժանկալի ծառայութիւններ կը մատուցանեն այս երկրին մէջ, ուր վերոյգրեալ հիւանդութիւնք կը տիրեն։ Իրենց գործածութիւնը կը յանձնարարուի մանաւանդ այս միջոցիս, ուր բազմատեսակ իւղեր կը վաճառուին որք Մորիւ ձկան ճշմարիտ իւղ չլինելէ զատ ամեն ինչ են։

Մասնագիտաց իւղոց խոկ կեղծեր և նմանութիւններ կը պատրաստուին Կ. Պոլսոյ մէջ խոկ։ Թուրքիոյ համար
ընդհանուր մեծավաճառ և
ներկայացուցիչ
Ժ. ԱԼԻԲՐԱՆՏԻ
Դեղարան Տէքքէ–Սոքաղ, Բերայի մեծ փողոց, Թիւ 169

ՍԵՂԱՆԻ ԸՄՊԵԼԻ

ՑԱՐԳԵԼԻ ՀԱՑԻ ԳԻՐՄԱՆԻ

Նման «Շարթրէօզ»ի գինւոյն, ախորժահամ և յոյժ առողջարար ըմպելի մ'է և մեծապէս կը դիւրացնէ մարսողութիւնը։

Գլխաւորապէս կը գտնուի Գ. Պէրթէն եղբարց քով, Ղալաթիա, Սիթէ Ֆրանսէզ։

ԻԼԱՆ

ՕՐՄԱՆ ՎԷ ՄԷԱՏԻՆ ՄԵՃԼԻՍԻ

Պուլղար տաղը մատէնի հասըլաթընտան իքի պուչուք թօքսան տէօրթ պին տօքուզ պուչուք էլլի պիր պէնի աւրէնքմ ամ իլէ պին ալթը պուչուք պիրմի իւչ պէնի աւրէնքմ ալթուն պիլ միղտարըէսմէ ֆիրուխթ օլունաճաղընտան մէ իշպու նիսանըն եէօրտիւնճիւ բէնճշէնպէհ կիւնիւ նիհայէթ սաաթ տօքուզտա գարարը գաթիի վէրիլէճէկինտէն թալիպ օլանլարըն տէբօզիթօ վէ եա միւթէպէր քէֆիլլէրի իլէ պէրապէր օրման վէ մէատին մէճլիսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։

31 մարտ 1301

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԵՐԱՍՔԵՐԻ

Նիզամիյէ համթայ ամպարը իչուն չէրայիթի մուգաւէլէսի վէճհ իլէ միւզայէտէ օլունաճաղը վէ գարարը գաթիի վէրիլէճէկի էյլիւլէ իլան գըլընան ևիւղ ևիրմի պին խուտա ճէլիպ չէքի համթայ իլէ իքի միլիոն ղըյէ մանկալ քէօմիւրինին գարարը գաթիիյինին իճրասը նիսանը ռումինին իւչիւնճի չարշէնպէհ կիւնիւնէ թէէխիւր իւնիւն ֆիյաթըն ևիւզտէ պէշ թէնզիլի թալիպ թէօրուինճէ բէնճշէնպէհ կիւնիւ կիւլինաբաղ համթայըն պէհէր խուտա չէքի սի ճիւզ վէ քէօմիւրին պէհէր ևիւղ ղըյէսի ևիրմի ալթը ղրուշա թալիպի էօհտէսինտէ իսէ թալիպ օլանլարըն լէվազըմաթ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

30 մարթ 1301

2—3

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԵՐԱՍՔԵՐԻ

Տէրսաատէթ վէ պիլատը սէլասէ տէ քային էսքէրիյէ իչին մուգթազի օլան Մադրի գարիլէսի բիւֆէքլի թայը մէվճուտ միւնագասայա գօնուլարագ, նիսանը ռումինին օն պէշինճի կիւնիւ գարարը վէրիլէճէկինտէն կիւնիւ նիհայէթ սաաթ թօղուզտա գարարը գաթիյինի իճրասընտան օլունաճաղընտան, իթայա թալիպ օլանլարըն չէրայիթինի կէօրմէք իչին իւ թալիպ իսէ լէվազըմաթ դայիրէսինէ միւրաճաաթ իթմէլէրի իլան օլունուր։

30 մարթ 1301

2—3

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԽՏԻՎԻԷ

ՈՒՂՂԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԻՋԵՒ

ՏԱԳԱԼԻՑԷ շոգենաւն, Նաւապետ ՆՕՄԻՐՕ պիտի մեկնի յառաջիկայ Չորեքշաբթի Ապրիլ 15, ժամը 4ին։

Շոգենաւը Ալեքսանդրիայէն «Ֆաթօրմ» պիտի ընէ Բօրթ-Սայիտ և Եաֆա։

Խտիվիէ Ընկերութեան շոգենաւք Կ. Պոլսէն կը մեկնին ամեն Չորեքշաբթի երեկոյները, Տարտանէլ, Միտիլլի, Իզմիր և Բիրէա հանդիպելով։

Աղեքսանդրիա կը հասնին երկուշաբթի առաւօտները։ Ուղեւորութիւնը կը տեւէ չորս ու կէս օր։

Ուղեւորներու և ապրանաց համար դիմել Պոլիս, Կամուրջին քով, Վալիտէ–Սուլթան խան և կամ Ղալաթիոյ ճիւղը, Վօյվօտա փողոց, Եուսուֆ Իզզէտտին խան։

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՅՄԱՆՔ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Առաջին կարգի սեղան։ Ընկերութեան կին մը յատկացուած է տիկնանց սրահին։ Միանգամայն իւրաքանչիւր շոգենաւի մէջ Եւրոպացի բժիշկ մը կը գտնուի։ Առաջին ստորիճանի տոմսակ մինչեւ երեք ամիս ընդունելի են, դիւրութիւն ընծայելու համար անոնց որք իրենց ճամբորդութեան շրջանին մէջ հանդիպած ո՛ և է նաւահանգիստը իջնելով, օրերով ժամանակ անցնելն և յաջորդ շոգենաւով իրենց ճամբորդութիւնը շարունակել ուզեն։ Առնուած երկու անգամ բացուելու տոմսակաց վրայ % 10 զեղչ մը կը լինի։ Երթ ու դարձի տոմսակաց վրայ % 10 զեղչ մը կը լինի, ի բաց առեալ ճաշը։ Ընտանեաց համար այս զեղչն % 15 է։ Երթ ու դարձի տոմսակը մինչեւ վեց ամիս ընդունելի են, եթէ Ապրիլի սկիզբէն մինչեւ Յուլիսի սկիզբը գնուին, իսկ տարւոյն միւս ամիսներուն մէջ մինչեւ երեք ամիս ընդունելի են։

Ծանօթ. — Խտիվիէ ընկերութեան կարմիր ծովու մէջ բանող շոգենաւներն ամեն ուրբաթ Սուէզէն ելնելով, շաբաթը մէյ անգամ Եամպօ, Ճիտտէ և Սուաքիմ, և տասնհինգ օրն անգամ մը Մասաուա, Հօտէյտա և Ատենի ծովածոցին մէջ, Թաճուրա, Զէյլա, Պէրպէրա և Ատենի նաւահանգիստները կը հանդիպին։

ԵՐԿՔ Գ. Գ. ԳԱԼՖԱՃԵԱՆ ԷՖԷՆՏԻԻ

Նոր հրատարակութիւնք

ՌԷՀՆԻՒՄԱՅԻ ԷՏԷՊԻՅԱԹԸ ԹԻՒՐՔԻՅԷ

Ուսմանեան ճարտասանութիւն
կամ
Համառօտ Թուրք. լեզուի

Գործոյս արտօնութիւնն է՝ Օսմ. լեզուի մէջ Թուրք. Արաբ. և Պարս. բառերու գործածութեան գլխաւոր կանոններն, ոճերն ու դարձուածներն, միանգամայն իրեն վերաբերող Բառագրքուկ մը։

Գին 6 ղրուշ

ՄԻՖԹԱՀԸ ԼԻՍԱՆԸ ՕՍՄԱՆԻ

Բանալի Օսմ. լեզուի

Ցոյժ դիւրուսանելի եղանակաւ պատրաստուած Գործնական Ընդարձակ Քերականութիւն Թուրք. Արաբ. և Պարս. լեզուաց, ճոխ հրահանգներով, միանգամայն իրեն վերաբերող մի բառագրքուկով։

Գին 10 ղրուշ

ՌԷՖԻՔԻ ՎԷՖԻՔ

Ծոցի ընկեր

Բանալին է այն հրահանգաց, որք կը գտնուին վերոյիշեալ Թուրք. Արաբ. և Պարս. Քերականութեանց մէջ։

Գին 5 ղրուշ

ՈՒՍՈՒԼԸ ՀԷՃԱ ՈՒ ԳԸՐԱԼԹ

Հեգական և Ընթերցման Օսմ. լեզուի

Ամենայն խնամով պատրաստուած դասագիրք մ'է որ կուսուցանէ Թուրք լեզուն հիմնովին և սուղ ժամանակի մէջ կարդալ ըմբռնել ու գրել։

Գին 3 ղրուշ

ԱՑԻՆԷԻ ՈՒՍՈՒԼԸ ԳԸՐԱԼԹ

Հայերէն Ընթերցանութեան

Վերոյիշեալ Ընթերցարանի ձեռագիր պատճէնն է, որոց մին ընդ միւսի բաղդատելով կը փորձուի Ուսանողն։

Գին 1 ղրուշ

Կեդրոնատեղի Յ. Գավաֆեան Գրատուն։
Կը գտնուի նաև ամեն գրավաճառաց քով։

4—5

ՊԱՐՈՆԱՅՔ Ճ. Վ. ՈՒԻԹՈԼ
ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ ապրիլ 1էն սկսեալ Ա. Ժ.Ա.Ն. գնով վարձու կուտան իրենց այժմեան խանն (իրենց գրասենեակները պիտի փոխադրուին նոյն փողոցը գտնուող իրենց յատուկ խանն), որ կը պարունակէ երկու մեծ խանութներ և 5 սենեակներ առաջին յարկը։

Դիմել առ Ճ. Վ. ՈՒԻԹՈԼ

Պոլիս, Պաղչէ-գարու, Էօմէր Էֆէնտի խանին դիմաց։

ՍԷՅՏԷԼ ԵՒ ՆԱՈՒՄԱՆ

ՏՐԷԶՏԱ [ՍԱՔՍՈՆԻԱ]

Եւրոպիոյ մէջ կարի մեքենայ շինող ամենամեծ գործարանն։



Գործարանատեարք «Օրիժինալ Սաքսոնիա Րէժիա» կոչուած հրաշալի ձեռքի մեքենային։

ՆՈՐ ԴՐՈՒԹԻ՛ՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻ՛՛ՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻ՛՛՛ՒՆ

Ընտանեաց համար ձեռքով և ոտքով բանող մեքենայք։

ՆԱՈՒՄԱՆ մեքենայն B

Մուշտակներու և դերձակներու համար մեքենայք։



Այս մեքենայն իւր թելին առկայծիկէ տեղ մ'ունի, ինչպէս նաև ամեն տեսակ կարերու համար նորանոր գործիքներ, և շատ դիւրութեամբ լաւ ՕՂԱԿ շինելու համար մասնաւոր գործիք մը։

Այդ մեքենային համար աշխարհիս ամեն կողմ արտօնութիւն առնուած է։

Ծանօթ. —Այդ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ չտեսած՝ կարի մեքենայ մ՛ գնէք։

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆ
ORIGINAL SAXONIA REGIA
SEIDEL & NAUMANN, DRESDEN.

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆ
MACHINE NAUMANN
SEIDEL & NAUMANN, DRESDE.

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ՁՐԻ ԿՈՒՍՈՒՑՈՒԻ

Ընտանեաց համար օղակի գործիք				ղր.	75
Դերձակաց	»	»	»	»	125

Թուրքիոյ և Պուլկարիոյ համար
գործակալ և մեծավաճառ
ԷՄ. Ժ. ՄԷՐՃԱՆՕՖ
Կ. Պոլիս, Հաճօբուլօ խան, Թիւ 17

Ամեն ատենէն 1500 մեքենայ միշտ պատրաստ կը գտնուին։

ՆՈՐՏՏԱՅՉԷ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԻՀԱՄՊՈՒՐԿ

Յիշեալ ընկերութիւնն հրդեհի դէմ կ'ապահովադրէ տուներ, կարասիներ, խանութներ և ապրանքներ յոյժ շահաւէտ պայմաններով, միջնորդութեամբ իւր ընդհանուր գործակալութեան

ՇԻՆՏԼԷՐ ԵՒ ԱՍՏՈՒԾԱՏՈՒՐ
Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՀՉԷ-ԳԱՊՈՒ, ՃԷԼԱԼ ՊԷՅ ԽԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ



ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ–ՉԷՔՄԷՃԷԻ

Սկսեալ ի 25 Մարտէ (Ն. Տ.) 1885, մինչեւ ցնոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ–ՉԷՔՄԷՃԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՅ																							
	4	2	6	8	10	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	62	64	66	
	Առաւօտ											Իրիկուն												
	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.
Կ. Պոլիս	6 14	7 15	7 42	8 14	8 43	9 12	9 42	10 20	10 39	11 17	11 49	12 52	1 27	2 26	3	3 34	4 4	4 40	5 11	5 42	6 1	6 26	6 57	... ...
Գում–գաբու	6 25	7 27	7 53	8 25	8 54	9 23	9 53	10 30	10 49	11 28	12 —	1 2	1 38	2 37	3 11	3 45	4 15	4 51	5 22	5 53	6 12	6 37	7 8	... ...
Եէնի–գաբու	6 29	... ...	7 57	... ...	8 58	... ...	... ...	10 34	10 53	11 32	12 04	1 06	1 42	2 41	3 15	3 49	4 19	4 55	5 26	5 58	... ...	6 42	7 13	... ...
Տավուտ փաշա	6 32	... ...	8 —	... ...	... ...	... ...	... ...	10 37	10 56	11 35	12 07	1 9	1 45	2 44	3 18	... ...	4 22	... ...	5 29	6 1	... ...	6 45	7 16	... ...
Սամաթիա	6 37	... ...	8 6	... ...	9 4	... ...	... ...	10 42	11 1	11 40	12 12	1 14	1 50	2 49	3 23	3 55	4 27	5 1	5 34	6 6	... ...	6 50	7 21	... ...
Եետի–գուլէ	6 42	7 41	8 12	8 33	9 10	9 31	10 1	10 46	11 4	11 45	12 15	1 17	1 55	2 54	3 26	4 ...	4 30	5 7	5 37	6 9	6 22	6 54	7 27	... ...
Մաքրիգիւղ	6 54	8 —	8 25	... ...	9 23	... ...	... ...	10 59	... ...	11 58	... ...	... ...	2 8	3 6	... ...	4 14	... ...	5 21	... ...	... ...	6 36	. ...	7 39	... ...
Այ–Ստեփանոս	... ...	8 14	8 36	... ...	9 33	... ...	... ...	11 10	... ...	12 10	... ...	... ...	2 19	... ...	... ...	4 25	... ...	5 32	... ...	... ...	6 50	... ...	... ...	... ...
Քիւչիւք-Չէքմէճէ	... ...	8 25	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	12 19	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	6 59	... ...	... ...	... ...
....	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...

ՔԻՒՉԻՒՔ–ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՅ																							
	5	7	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	61	63	65	1		
	Առաւօտ										Իրիկուն													
	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.
Քիւչիւք-Չէքմէճէ	... ...	... ...	7 34	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	1 16	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	6 38	... ...	... ...
Այ–Ստեփանոս	... ...	... ...	7 44	... ...	8 44	... ...	9 38	... ...	... ...	11 17	... ...	1 27	... ...	2 29	... ...	... ...	... ...	4 39	... ...	5 54	... ...	6 51	... ...	... ...
Մաքրիգիւղ	6 30	7 23	7 57	... ...	8 54	... ...	9 49	... ...	... ...	11 30	... ...	1 40	... ...	2 41	3 13	... ...	... ...	4 51	... ...	6 7	... ...	7 5	... ...	... ...
Եետի–գուլէ	6 44	7 37	8 11	8 38	9 9	9 37	10 2	10 12	11 12	11 44	1 22	1 54	2 21	2 55	3 27	3 59	4 35	5 6	5 42	6 23	7 ...	7 26	... ...	... ...
Սամաթիա	6 49	7 41	8 15	8 42	9 13	9 41	... ...	10 16	11 16	11 48	1 26	1 58	2 25	2 59	3 31	4 3	4 39	5 10	... ...	6 27	... ...	... ...	... ...	... ...
Տավուտ փաշա	6 54	7 46	... ...	8 47	... ...	9 46	... ...	10 21	11 21	11 53	1 31	... ...	2 30	3 4	3 36	4 8	4 44	... ...	... ...	6 33	... ...	... ...	... ...	... ...
Եէնի–գաբու	6 58	7 49	8 21	8 50	9 19	9 49	... ...	10 24	11 24	11 56	1 34	2 4	2 33	3 7	3 39	4 11	4 47	5 16	... ...	6 38	... ...	... ...	... ...	... ...
Գում–գաբու	7 3	7 54	8 26	8 55	9 24	9 54	10 11	10 29	11 29	12 01	1 39	2 8	2 38	3 12	3 44	4 16	4 52	5 21	5 52	6 47	7 10	7 40	... ...	... ...
Կ. Պոլիս	7 12	8 3	8 35	9 4	9 33	10 3	10 20	10 38	11 38	12 10	1 48	2 17	2 47	3 21	3 53	4 25	5 1	5 30	6 1	... ...	7 19	7 50	... ...	... ...
....	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մաքրիգիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջեւ բեռնաւոր կառախմբ

ԲԱԲԱՅԱՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրբուլի, Միջերկրականի և Օտեսայի միջև կանոնաւորապէս բանող

ՇՈԳԵՆԱՒՔ

Անուանք	Թօնոյ	Նաւապետք
Այա Սօֆիա	3,000	Պըքս
Սքոտրա	2,500	Ռոճըրս
Արքատիա	2,500	Քրուքշանք
Լաքոնիա	2,500	Ուօքըր
Մաքետոնիա	3,500	Մարշ
Ռումէլիա	2,800	Ֆօթըրկիլ

Մաքետոնիա շոգենաւն ամսոյս 20ին շաբաթ օր Պաթումէն աստ պիտի վերադառնայ և Լիվըրբուլ պիտի ուղեւորի։

Ռումէլիա շոգենաւն ամսոյս 10ին Լիվըրբուլէն աստ պիտի հասնի և անմիջապէս վերստին Լիվըրբուլ պիտի ուղեւորի։

Ընկերութիւնն օրինաւոր գներով վաճառք կ'ընդունի Եւրոպական երկիրներու և Ամերիկայի համար։

Ամեն դիւրութիւն և հանգստութիւն կը տրուին ուղեւորաց։

Դիմել առ ԴԱՆԻԷԼ, ԲԱԲԱ ԵՒ ԸՆԿ.
Գործակալք

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ԲԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիայի և Բաթումի միջեւ կանոնաւորապէս բանող

Սամսուն, Տրապիզոն և Պաթում երթալիք յառաջիկայ շոգենաւն է լ'Արմէնի որ ապրիլ 8ին Մարսիլիայէն և ապրիլ 15ին Պոլսէն պիտի մեկնի։ Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է լը Վէրիէ որ կը մեկնի ապրիլ 13ին երեկոյեան ժամ 5ին։

Ուղղակի և արագ ուղեւորութիւն

Նաւուղիէի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՆԻԿՈԹԷ ՐԸԳՈՒԼ
Մահմուտիէ փողոց, Թիւ 141

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրբուլի և Միջերկրականի միջև բանող
շոգենաւք

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Քանոբուս	4200	Օսայրիս	3000
Ֆէրոս	4000	Նեֆթիս	3000
Օսմանլի	4000	Բէրոս	3000
Սեսօսդրիս	3250	Ատլանտիք	1700
Թիպս	3250	Լոթըս	800
Մեմֆիս	3250	Օլինտա	800
Մարեոթիս	3250	Սեսիլ	700

Օսայրիս շոգենաւ, Նաւապետ Բօլ, ամսոյս 31ին Լիվըրբուլէն աստ կսպասուի ընդհանուր վաճառքով։

Բէրոս շոգենաւ, Նաւապետ Ֆօրեստըր, ամսոյս 30ին Սամսոնէն պիտի վերադառնայ և ուղղակի Լիվըրբուլ պիտի ուղեւորի։

Վերոյիշեալ շոգենաւք չքնաղապէս յարդարուած են ճամբորդներու համար

Դիմել առ Ժ. Թ. ՈՒԻԹՈԼ և ԸՆԿ.
Մէյտանճըգ փողոց, Պոլիս
Տնօրէնութիւն, Լիվըրբուլ
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
31, Ճէյմս Սդրիդ, Լիվըրբուլ

ՖՐԷՏ ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք կանոնաւորապէս կը բանին Լիվըրբուլի և Սեւծովու միջեւ.

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Ալճէրեան	2500	Ֆավոնեան	3700
Ալզասեան	2500	Ֆլամինեան	3700
Անտալուզեան	2500	Ֆլավեան	3700
Աթենեան	2500	Իպերեան	5500
Արմենեան	3700	Իլիրեան	5500
Բաւարեան	6000	Իսդրեան	5500
Բուլկարեան	6000	Լեսպեան	2200
Քասթիլեան	800	Լիկուրեան	2500
Սարտինեան	2000	Լիբեան	800
Տուրիստ	700	Օբորթօ	700
Եճիբշըն	3700	Բէրսիան	3800
Ֆապիան	3700	Վալենսիան	6800
Ֆալէրնեան	3700	Վիրճինեան	6800

Ալզասեան շոգենաւը, Նաւապետ Քրիսթիան, ամսոյս 13ին ընդհանուր վաճառքով աստ կ'սպասուի։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի.

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԹԷՆ
Գործակալ
Թիւ 34, 35, 36, Նէֆի
Միւլքէթ խան, Ղալաթիա.

Նաւատեարք, Պարոնայք Ֆրէտ, Լէյլանտ և ընկ.
Լիվըրբուլ

Գործակալութիւնք

Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնդէն.
Ճիպրալդար, Պ. Պ. Քարվըր Եղբարք
Ալեքսանդրիա, Կ. Լ. Վաչման և ընկ.
Մալդա, Ա. Քամիլլերի.
Շիրա, Ա. Մ. Մավրոկորտադոյ.
Զմիւռնիա, Պ. Ուիդօլ և ընկ.

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ
Ընդ մէջ Անկլիոյ, Կ. Պոլսոյ և Օտեսայի

ԹՈՎՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ
ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Ալպանօ	2,000	Լէանդրօ	4,500
Անձէլօ	3,000	Մարէնկօ	4,300
Արկօ	1,300	Մարոտին	2,500
Պասսանօ	3,500	Միլօ	2,000
Պորտինօ	2,200	Նէրօ	2,000
Պրավօ	2,000	Օթէլլօ	5,000
Գէյրօ	2,600	Օրլանտօ	3,000
Գալիբրօ	2,500	Օդրանդօ	4,500
Գամէօ	2,100	Օդդօ	2,000
Գադօ	2,000	Բաաքիֆիք	1,200
Գօմօ	2,700	Բալերմօ	3,200
Տիտօ	2,500	Բասդէր	1,700
Տօմինօ	1,800	Բիզօ	2,800
Էրաքօ	2,600	Րիալդօ	4,400
Տրագօ	2,600	Րինալտօ	3,200
Ֆալքօն	800	Րօլլօ	3,000
Ֆիտօ	1,700	Րօմանօ	5,500
Ֆլամինկօ	1,600	Րօմէօ	3,500
Կալիլէօ	5,500	Սալերնօ	4,000
Կիթանօ	2,200	Սաֆօ	2,000
Կոզօ	1,800	Սիլվիօ	2,000
Կրօտօ	2,200	Սօրենդօ	4,300
Հանկօ	[illegible]	Թասսօ	1,200
Հէրօ	2,000	Թ. Ուիլսըն	3,000
Հիտալկօ	3,000	Թիկէր	1,300
Հիւմպէրդ	1,200	Թօլէտօ	2,800
Ջիւօ	2,300	Թրանդօ	3,600
Քէլրօ	2,000	Եէտօ	3,600
Քոֆօ	2,200	Զէպրա	1,000
Լէօ	2,000	Զէրօ	140

Եէտօ շոգենաւն Հըլէն աստ հասաւ ընդհանուր վաճառքով և իւր բեռը պարպելէ յետոյ Օտեսա պիտի ուղեւորի։

Րինալտօ շոգենաւը, որ այժմ բեռ կ'առնու ի Հըլ, ի մօտոյ պիտի մեկնի ի Պոլիս և անտի յՕտեսա։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի.

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ՖՐԷՏԵՐԻՔ ՀԻԼՏ
Գործակալ
Թիւ 17–18, Քիւչիւք Միւլքէթ
խան Ղալաթիա

ՔԻՆԱՐՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք ամեն տասնըհինգ օր անգամ մը կը բանին Լիվըրբուլի և Միջերկրականի միջև.

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Օրանիա	7,000	Մալթա	3,000
Ատլաս	3,000	Մորոքքօ	2,500
Ալճէրիա	3,000	Նանթ	2,500
Բոթնիա	4,600	Բաւոնիա	5,000
Պալեսթին	2,500	Բալմիրա	3,000
Բրիթիշ Քուին	1,200	Սերվիա	7,800
Սեֆալոնիա	5,000	Սիդիա	4,600
Քատալոնիա	4,700	Սարաքօսա	3,000
Շէրպուրկ	2,000	Սամարիա	3,000
Էմերալտ	2,500	Սիտոն	3,000
Կալլիա	4,000	Թարիֆա	3,000
Քէտար	2,500	Թրինիտատ	2,500
Մարաթոն	3,000		

Քէտար շոգենաւը, Նաւապետ Ուօթ, աստ հասաւ և ի մօտոյ պիտի մեկնի ի Լիվըրբուլ Զմիւռնիոյ ճամբով։

Սոյն ընկերութիւնն արտօնութիւն ունի ուղեւորներ և վաճառք ընդունիլ Նիւ–Եորքի, Պոսթընի, կամ Ամերիկայի և Գանատայի ուրիշ և ոեւէ նաւահանգստի համար։

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՈԼԻ
Գործակատար
Թիւ 1 Քիւչիւք Հալիլ
փաշա խան Ղալաթիա

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ